Հիւր Ֆրանկեան, եղբ.

Ն ո ւ է ր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան կողմէ
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի Մատենադարանին

1 9 6 6

47-5

ՀԱՄԱՌՕՏ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԼԱՏԻՆ ԲԱՐԲԱՌՈՅ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1839

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀՌՈՎՄԱՅԵՑՒՈՑՆ բարբառ թէպէտ և 'ի տուրևառիկ վաճառաշահութեան չէ ինչ 'ի կարևորաց, սակայն առ ամենայն հմտացեալս Եւրոպայ ցայժմ իսկ լեզու է սա հասարակաց, և ամենայն գիտութեանց աւանդապահ, և 'ի կենցաղօգուտ քաղաքականութեան ոչ անպիտան։ Իսկ ճոխութեամբ ականաւոր մատենագրացն, որ սովաւ վարեցան, 'ի ծայր բարգաւաճագոյն լեզուաց անցեալ է. և բնիկ գեղեցկութեամբ վայելչահիւս մանուածոյն ես ցանկալի առ հասարակ որոց 'ի բանասիրութեան հրահանգս դեգերեցին։

Զայսպիսւոյ վսեմ բարբառոյ զկանոնս պարտ էր արդեօք ամենայն

հաւաստեօք աւանդել, և ոչ վեր 'ի վերոյ, որպէս հասակ մատենիս դու-
շակէ ։ Բայց մեր և յայսմիկ խնամ կալեալ չափաւորութեան մերոց ու-
սումնասիրաց, զարդիս շատ համարեցաք հետս իմն անձուկ բանալ և
դիւրել սովիմբ առաջի նոցա, և 'ի մթերս անսպառ գանձուց դպրութեան-
ցըն Լատինի լինել նոցին ձայնատու ։ Իսկ թէ ընտիր ախորժակաց մա-
տենագրացն Հռովմայեցւոց նախանձաւոր լիցին մերազնեայք, որպէս
նոքայն Ելլադայ ․ որով և այժմուքս ոչ ստորև մնասցուք քան զիմաս-
տախնդիր հարս մեր արժանիս անմահ յիշատակաց ։

ՀԱՄԱՌՕՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԼԱՏԻՆ ԲԱՐԲԱՌՈՅ

ԱՅԲՈՒԲԵՆՔ

A	a	ա	ա.	N	n	էն	ն.
B	b	պէ	պ.	O	o	օ	օ.
C	c	ցէ	ց, ք.	P	p	փէ	փ.
D	d	տէ	տ.	Q	q	գու	գ.
E	e	է	է.	R	r	էռ	ռ.
F	f	էֆ	ֆ.	S	s	էս	ս.
G	g	ճէ	ճ, կ.	T	t	թէ	թ, դ.
H	h	հա կամ աքքա	յ, հ.	U	u	ու	ու.
I	i	ի	ի.	V	v	վէ	վ.
J	j	ի (երկար)	ի, յ.	X	x	իքս	քս.
K	k	քա կամ քափփա	ք.	Y	y	իփսիլօն	ի.
L	l	էլ	լ.	Z	z	զէթա	զ.
M	m	էմ	մ.				

Ի սոցանէ վեցեքին տառքս ձայնաւորք են. a, e, i կամ j, o, u, y; այլքն բաղաձայնք: Բայց տառս h ըստ հնչման Իտալացւոյ անձայն է. և 'ի բառքս Mihi և Nihil հնչէ որպէս ք փափուկ, Միքի, Նիքիլ:

Գլխաւորքն յերկբարբառս են ae է, և oe է. որ aetas Էթաս, հասակ. coelum չէլում, երկինք:

Տառքս c և g եթէ ունիցին զհետ բաղաձայն ինչ, կամ զմի 'ի ձայնաւորացս a, o, u, հնչեն ք և կ. որ calendae քալէնտէ, կաղանդք. guttur կուտթուռ, որկոր: Բայց g յառաջեալ քան զտառս n, մեղմ հնչի. որ magnus մաննյուս, մեծ:

Նոյն տառք c և g 'ի յաջորդել զկնի նոցա ձայնաւորացս e, i, կամ երկբարբառիցս ae և oe, հնչեն չ և ճ. որ caecitas չէչիթաս, կուրութիւն. genitor ճէնիթօռ, ծնող: Եւ եթէ կրկնեսցին տառքս յառաջ քան զ e և i, մին հնչէ ք, կ, և միւսն չ և ճ. որ accidens աքչիտէնս, պատահար. agger ակճէռ, ագարակ:

Ph փարի 'ի յունական բառս, և հնչի ֆ. որ philosophus ֆիլօ́սօֆուս, իմաստասէր:

S 'ի մէջ երկուց ձայնաւորաց հնչէ զ. որ occasus օքքա́զուս, արևմուտք:

T յորժամ ունիցի զհետ իւր զտառս i հանդերձ այլով ձայնաւորաւ, հնչէ ց. որ prudentia փռուտէնցիա, խոհականութիւն: Այլ եթէ յառաջեսցէ քան զնա տառս s, պահէ զբնիկ հնչումն իւր թ. որ quaestio քուէսթիօ, խնդիր:

ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Փոխաբերութիւն լատին այբուբենից 'ի հայկական պիտանի յոյժ գտանի 'ի յատուկ անուանս. և կանոնք տառադարձութեան 'ի լատինէ 'ի մեզ նոյն են գոգցես՝ որ ինչ և 'ի յունէն 'ի մերս, այսպէս.

A	ա.	Adam	Ադամ.	—	ժ.	Magíster	Մաժիստռ.
B	բ.	Basílius	Բասիլիոս.	H	հ.	Homérus	Հոմերոս.
—	վ.	Bárbara	Վառվառէ.	—	—	Hábacuc	Ամբակում.
C	կ.	Cájus	Կայիոս.	I	ի.	Isis	Իսիս.
ch	ք.	Christus	Քրիստոս.	J	յ.	Job	Յովբ.
—	խ.	Pachomaéus	Պախոմէոս.	K	կ.	Kaléndae	Կաղանդք.
—	շ.	Chlorus	Շլոռոս.	L	լ.	Líbya	Լիբիա.
D	դ.	Dídymus	Դիդիմոս.	—	ղ.	Lucas	Ղուկաս.
E	ե.	Elías	Եղիա.	M	մ.	Magnus	Մագնոս.
—	է.	Geórgius	Գէորգ	N	ն.	Ninus	Նինոս.
F	ֆ.	Fábius	Փաբիոս.	O	ո.	Pontus	Պոնտոս.
G	գ.	Gregórius	Գրիգոր.	P	պ.	Pompéius	Պոմպէոս.
—	ղ.	Ágatho	Աղաթոն.	ph	ֆ.	Sophía	Սոփիա.

Q	կ.	Quártus	Կուարտոս.
R	ր.	Petrus	Պետրոս.
—	ռ.	Raca	Ռակայ.
—	հռ.	Roma	Հռովմ.
rh	հռ.	Rhodus	Հռոդոս.
S	ս.	Secúndus	Սեկունդոս.
—	շ.	Arsáces	Արշակ.
—	զ.	Cosmas	Կոզմաս.
T	տ.	Tértius	Տերտիոս.
th	թ.	Thomas	Թովմաս.
U	ու.	Cúrtius	Կուրտիոս.
—	ո, ւ.	Augústus	Աւգոստոս.
V	վ.	Valens	Վաղէս.
—	բ.	Juvenális	Յոբնաղ.
X	քս.	Felix	Փելիքս.
—	շ.	Artaxérxes	Արտաշէս.
Y	իւ.	Hyrcánus	Հիւրկանոս.
—	ե.	Sylvéster	Սեղբեստրոս.
Z	զ.	Zacharías	Զաքարիաս:

Են տառք ինչ և վանկք 'ի լատինն, որոց դարձուած 'ի մերս լինի առաւելութեամբ և նուազութեամբ, վասն նմանելոյ յունաց քան լատինացւոց, կամ վասն դիւրութեան հնչման 'ի հայումս. այսպիսիք են,

O (յանգ)	ովն կամ ոն.	Cícero	Կիկերովն կամ Կիկերոն.
Ans	աս.	Constans	Կոստաս.
Ens	էս.	Clemens	Կղեմէս.
Der	դրոս, կամ դր.	Alexánder	Աղեքսանդրոս կամ Աղեքսանդր.
Ter	տրոս.	Magíster	Մագիստրոս (կամ Մաժիստր).
Inus	իանոս.	Constantínus	Կոստանդիանոս կամ Կոստանդին.
Inius	իանոս.	Gabínius	Գաբիանոս:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅԱՂԱԳՍ ԲԱՌԻՑ

Ինն ազգք բառից են առ լատինացիս. Անուն, Ածական, Դերանուն, Բայ, Ընդունելութիւն, Մակբայ, Նախադրութիւն, Շաղկապ, և Միջարկութիւն։

ԱՆՈՒՆ

Անունն յորջորջիչ անձին կամ իրի՝ հոլովական է եզակի կամ յոգնակի։ Հոլովք լատինացւոց փոփոխութեամբ վերջաւորութեանց բառիցն իբրև զմերն կազմին. և են առ նոսա հոլովք վեց. Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Կոչական, Բացառական, որ և Գործիական է առ նոսա։ Պատմական և Պարառական հոլովք Նախադրութեամբք կազմին։

Իսկ հոլովումն նոցա հինգ է, որ յեզակի և՛ի յոգնակի սեռականացն որոշին.

Առաջնոյ հոլովման եզակի սեռականն լինի ae: զր Rosa, rosae Վարդ.
Երկրորդին i: Dóminus, dómini Տէր.
Երրորդին is: Sermo, sermónis Ճառ.
Չորրորդին us: Manus, manus Ձեռն.
Հինգերորդին ei: Dies, diéi Օր։

ՀՈԼՈՎՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ

Եզ.			Յոգն.	
Ո.	Ros a	վարդ.	Ros ae	վարդք.
Ս.	Ros ae	վարդի.	Ros árum	վարդից.
Տ.	Ros ae	վարդի, 'ի վարդ.	Ros is	վարդից, 'ի վարդս.
Հ.	Ros am	զվարդ.	Ros as	զվարդս.
Կ.	o Ros a	ո՜վ վարդ.	o Ros ae	ո՜վ վարդք.
Բ.	a Ros a	'ի վարդէ.	a Ros is	'ի վարդից։

Ըստ այսմ հոլովին և բառքս

Cáuda, ae	Ագի.	Hora, ae	Ժամ.	Musca, ae	Ճանճ.
Herba, ae	Խոտ.	Mensa, ae	Սեղան.	Pluma, ae	Փետուր։

Զգուշութիւն։

ա. Են բառք ինչ ընդ այսու հոլովմամբ, որոց յոգնակի տրականք և բացառականք յանգին abus, առ որոշելոյ յարականաց նոցին. որ
Equa Մատակ ձի, equábus. (Equus ձի, équis.)
Fámula Աղախին, famulábus. (Fámulus Ծառայ, fámulis.)

Ե. Գոն անուանք յանգեալք 'ի e, որք յեզակի սեռականն ըստ յունականն հոլովոյ յանգին 'ի es, և 'ի հայցականն 'ի en.
Են և այլք յանգեալք 'ի es, որոց սեռականն յանգի ae, և հայցականն en.
Գոն դարձեալ յանգեալք 'ի as, որոց սեռականն լինի ae, և հայցականն an; օրինակք երեցուն են.

Ո.	Músic e	Երաժշտութիւն.	Comét es	Գիսաւոր.	AEné as	Ենէաս.
Ս.	Músic es	Երաժշտութեան.	Comét ae	Գիսաւորի.	AEné ae	Ենէայ.
Տ.	Músic ae	յԵրաժշտութիւն.	Comét ae	ցԳիսաւոր.	AEné ae	ցԵնէաս.
Հ.	Músic en	զԵրաժշտութիւն.	Comét en	զԳիսաւոր.	AEné an	զԵնէաս.
Կ.	o Músic e	ով Երաժշտութիւն.	o Comét e	ով Գիսաւոր.	o AEné a	ով Ենէաս.
Բ.	a Músic e	յԵրաժշտութենէ:	a Comét e	'ի Գիսաւորէ:	ab AEné a	յԵնէայ:

Զ. Սեռականն բառիս Família Ազգատոհմ, յանգի և 'ի as ըստ յունաց. որպէս, Pater famílias Տանուտէր. Mater famílias Տանտիկին:

Է. Գտանի առ նախնիս, մանաւանդ առ քերթողս, յոգնակի սեռականն ուրեք կրճատեալ. որպէս Terrígena Երկրածին, terrígenum երկրածնաց. Coelícola Երկնաբնակ, coelícolum երկնաբնակաց. փոխանակ ասելոյ terrigenárum, coelicolárum.

ՀՈԼՈՎՈՒՄՆ ԵՐԿՐՈՐԴ

Օրինակ Ա.

	Եզ.		Յոգն.	
Ո.	Puer	Մանուկ.	Púer i	Մանկունք.
Ս.	Púer i	Մանկան.	Puer órum	Մանկանց.
Տ.	Púer o	ցՄանուկ.	Púer is	ցՄանկունս.
Հ.	Púer um	զՄանուկ.	Púer os	զՄանկունս.
Կ.	o Puer	ով Մանուկ.	o Púer i	ով Մանկունք.
Բ.	a Púer o	'ի Մանկանէ.	a Púer is	'ի Մանկանց:

Ըստ այսմ հոլովին և բառքս.

Vir, viri	Այր.	Socer, ceri	Աներ.	Magíster, tri	Վարդապետ.
Liber, bri	Գիրք.	Aper, pri	Կինճ.	Faber, bri	Դարբին.
Ager, agri	Ագարակ.	Gener, ri	Փեսայ.	Culter, tri	Դանակ.
Cancer, cri	Խեցգետին.	Satur, ri	Յագեալ.	Cóluber, bri	Օձ:

Օրինակ Բ.

	Եզ.		Յոգն.	
Ո.	Dóminus	Տէր.	Dómini	Տեարք.
Ս.	Dómini	Տեառն.	Dominórum	Տեարց.
Տ.	Dómino	ցՏէր.	Dóminis	ցՏեարս.
Հ.	Dóminum	զՏէր.	Dóminos	զՏեարս.
Կ.	o Dómine	ով Տէր.	o Dómini	ով Տեարք.
Բ.	a Dómino	'ի Տեառնէ.	a Dóminis	'ի Տեարց:

Ըստ այսմ հոլովին և բառքս.

Ásinus, ni	Էշ.	Rústicus, ci	Գեղջուկ.	Lupus, pi	Գայլ.
Avus, vi	Հաւ.	Hortus, ti	Պարտէզ.	Cálamus, mi	Եղէգն:

Զգուշութիւն:

Բառքս Deus Աստուած, և Agnus Գառն, և 'ի կոչականն միայն Deus, agnus. Իսկ Fílius Որդի, և յատուկ անուանք լատինականք յանգեալք ius, որպէս Pompéius, Antónius, 'ի կոչականն լինին i: Fili, Pompéi, Ántoni.

Օրինակ Գ.

	Եզ.		Յոգն.	
Ո.	Templ um	Տաճար .	Templ a	Տաճարք .
Ս.	Templ i	Տաճարի .	Templ órum	Տաճարաց .
Տ.	Templ o	'ի Տաճար .	Templ is	'ի Տաճարս .
Հ.	Templ um	զՏաճար .	Templ a	զՏաճարս .
Կ.	o Templ um	ով Տաճար .	o Templ a	ով Տաճարք .
Բ.	a Templ o	'ի Տաճարէ :	a Templ is	'ի Տաճարաց :

Ըստ այսմ հոլովին չէզոքականք յանգեալք 'ի um ; որպէս

Fólium, ii	Տերև .	Bráchium, ii	Բազուկ .	Vítium, ii	Ախտ .
Béllum, li	Պատերազմ .	Exémplum, pli	Օրինակ .	Stúdium, ii	Փոյթ :

Առ հասարակ ամենայն չէզոքականաց ուղղական և հայցական հոլովք նոյնպէս լինին . և յոգնականք նոցա միշտ յանգին 'ի a.

Են անուանք՝ որոց յոգնակի սեռականն orum երբեմն կրճատեալ փոխի 'ի um; որպէս Deorum 'ի Deum, Puerórum 'ի Púerum, Virórum 'ի Virum.

Գոն և յունական անուանք ընդ այսու հոլովմամբ, որ զյունական հոլովսն պահեն. որ

Ո. O'rpheus	Տ. O'rpheo	Կ. o O'rpheu
Ս. O'rphei *կամ* Órpheos	Հ. O'rpheum *կամ* O'rphea	Բ. ab O'rpheo

Այսպէս հոլովին և Pérseus *Պերսևոս*, Théseus *Թեսևոս*, *և այլք*։

ՀՈԼՈՎՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ

	Եզ.		Յոգն.	
Ո.	Sermo	*ճառ*.	Sermó nes	*ճառք*.
Ս.	Sermó nis	*ճառի*.	Sermó num	*ճառից*.
Տ.	Sermó ni	*՚ի ճառ*.	Sermó nibus	*՚ի ճառս*.
Հ.	Sermó nem	*զճառ*.	Sermó nes	*զճառս*.
Կ.	o Sermo	*ով ճառ*.	o Sermó nes	*ով ճառք*.
Բ.	a Sermó ne	*՚ի ճառէ*.	a Sermó nibus	*՚ի ճառից*։

Բազումեն որ ընդ սովաւ անկանին բառք, և սեռականն նոցա առաւել ուշադրութեան կարօտ.

Color, lóris Գոյն.	Homo, minis Մարդ.	Laus, udis Գովութիւն.
Flos, floris Ծաղիկ.	Ordo, dinis Կարգ.	Miles, mílitis Զօրական.
Pavo, vónis Սիրամարգ.	Cortex, ticis Կեղև.	Púgio, giónis Դաշոյն.
Dux, ducis Զօրավար.	Lapis, pidis Քար.	Cinis, cíneris Մոխիր :

Զարտուղութիւնք :

ա. Ոմանք յանուանց յանգելոց 'ի is, 'ի հայցականն յանգին 'ի im, որ

Gummis, gummim Խէժ.	Sitis, sitim Ծարաւ.
Pelvis, pelvim Կոնք.	Vis, vim Ոյժ.
Secúris, secúrim Տապար.	Cúcumis, cúcumim Վարունգ :

Ոմանք յանգին 'ի em և 'ի im; որ են

Cánnabis, bem և bim Կանեփ.	Navis, navem և navim Նաւ.
Clavis, clavem և clavim Բանալի.	Puppis, puppem և pim Խելքնաւու.
Febris, febrem և febrim Ջերմն.	Turris, turrem և rim Աշտարակ :

Որոց հայցականն լինի im, բացառականն յանգի i; իսկ որոց հայցականն յանգի 'ի em և im, բացառականն ևս լինի e, և i.

970

Է. Չէզոքաց յանգելոց 'ի e, al, ar, բացառականն յանգի i; որ

Altáre, altáris, altári Սեղան.	Calcar, calcáris, calcári Խթան.
Ánimal, animális, animáli կենդանի.	Púlvinar, pulvináris, pulvinári Բարձ:

Բայց առաջիկայքդ 'ի բացառականն յանգին 'ի e:

Sal, salis, sale Աղ.	Jubar, júbaris, júbare Պայծառութիւն.
Far, farris, farre Ալիւր.	Nectar, néctaris, néctare Նեկտար:
Hepar, hépatis, hépate Լեարդ.	

Գ. Անուանք որք 'ի բացառականն յանգին i, կամ e և i, 'ի յոգնակի սեռականն յանգին ium; որ Gúmmium, Clávium, Altárium.

Նոյնպէս յանգին և միավանկքս.

As, assis, ássium Դրամ.	Frons, frontis, fróntium Ճակատ.
Glis, gliris, glírium Առնէտ.	Gens, gentis, géntium Ազգ.
Lar, laris, lárium Վառարան.	Glans, glandis, glándium Կաղին.
Mas, maris, márium Արու.	Lens, lendis, léndium Անիծ.
Dens, dentis, déntium Ատամն.	Lens, lentis, léntium Ոսպն.
Fons, fontis, fóntium Աղբիւր.	Lis, litis, lítium Վէճ.
Mons, montis, móntium Լեառն.	Merx, mercis, mércium Վաճառ.
Stirps, stirpis, stírpium Ճիւղ, սերունդ.	Nix, nivis, nívium Ձիւն.

Mus, muris,	múrium	Մուկն.	
Vas, vadis,	vádium	Երաշխաւոր.	
Ars, artis,	ártium	Արուեստ.	
Arx, arcis,	árcium	Ամրոց.	
Cos, cotis,	cótium	Յեսան.	
Dos, dotis,	dótium	Օժիտ.	
Falx, falcis,	fálcium	Գերանդի.	
Faux, fáucis,	fáucium	Որկոր.	
Nox, noctis,	nóctium	Գիշեր.	
Pars, partis,	pártium	Մասն.	
Trabs, trabis,	trábium	Գերան.	
Urbs, urbis,	úrbium	Քաղաք.	
Cor, cordis,	córdium	Սիրտ.	
Os, oris,	órium	Բերան.	
Os, ossis,	óssium	Ոսկր։	

Եւ երկավանկքս.

Imber, imbris,	ímbrium	Անձրև.	
Venter, ventris,	véntrium	Որովայն.	
Uter, utris,	útrium	Տիկ.	
Caro, carnis,	cárnium	Մարմին	
Fornax, fornácis,	fornácium	Հնոց.	
Palus, palúdis,	palúdium	Ճահիճ։	

Եւ ես անուանք յանգեալք՚ի es և is, որոց վանկք՚ի սեռականն ոչ աճեն. որ
Clades, cladis, cládium Կոտորած. Ensis, ensis, énsium Սուսեր։

Այլ խոտորին

Canis, canis,	canum	Շուն.	
Júvenis, júvenis,	júvenum	Պատանի.	
Vólucris, vólucris,	vólucrum	Թռչուն.	
Vates, vatis,	vatum	Գուշակ.	
Panis, panis,	panum	Հաց.	
Strígilis, strígilis,	strígilum	Քերոց.	
Opes (անեզական),	opum	Ինչք։	

Է. Բառս Bos հոլովի այսպէս.

Եզակի.			Յոգնակի.	
Ո.	Bos	Եզն.	Boves	Եզինք.
Ս.	Bovis	Եզին.	Boum	Եզանց.
Տ.	Bovi	ցեզն.	Bobus կամ Bubus	ցեզինս.
Հ.	Bovem	զեզն.	Boves	զեզինս.
Կ.	o Bos	ով եզն.	o Boves	ով եզինք.
Բ.	a Bove	յեզանէ:	a Bobus կամ Bubus	յեզանց:

ՀՈԼՈՎՈՒՄՆ ՉՈՐՐՈՐԴ

Եզակի.			Յոգնակի.	
Ո.	Man us	Ձեռն.	Man us	Ձեռք.
Ս.	Man us	Ձեռին.	Mán uum	Ձեռաց.
Տ.	Man u	'ի ձեռն.	Mán ibus	'ի ձեռս.
Հ.	Man us	զձեռն.	Man us	զձեռս.
Կ.	o Man us	ով ձեռն.	o Man us	ով ձեռք.
Բ.	a Man u	'ի ձեռանէ:	a Mán ibus	'ի ձեռաց

Ըստ այսմ հոլովին արականք և իգականք յանգեալք 'ի us ; Փ

Vultus, us Դէմք.	Fructus, us Պտուղ.	Nurus, us Նու.
Áditus, us Մուտ.	Éxitus, us Կատարած.	Nutus, us Ակնարկութիւն.
Socrus, us Զոքանչ.	Cursus, us Ընթացք.	Deféctus, us Պակասութիւն.
Sensus, us Զգայութիւն.	Sumptus, us Ծախք.	Anus, us Պառաւ:

Զգուշութիւնք:

ա. Են բառք՝ որոց յոգնակի տրականքն յանգին ubus, որք են

Lacus, lácubus Լիճ.	Tribus, tríbubus Ցեղ.
Arcus, árcubus Աղեղն.	Portus, pórtubus Նաւահանգիստ.
Specus, spécubus Անձաւ.	Partus, pártubus Ծնունդ.
Artus, ártubus Անդամք.	Questus, quéstubus Բողոք:

բ. Անունս Jésus Յիսուս, 'ի հայցականն լինի Jésum, յայլ հոլովս Jésu.

գ. Բառս Domus Տուն, հոլովի այսպէս.

	Եզակի.		Յոգնակի.	
Ո.	Dom us	Տուն.	Dom us	Տունք.
Ս.	Dom us կամ Domi	Տան.	Dom órum կամ Dómuum	Տանց.
Տ.	Dóm ui	'ի Տուն.	Dóm ibus	'ի Տունս.
Հ.	Dom um	զՏուն.	Dom us կամ Domos	զՏունս.
Կ.	o Dom us	ով Տուն.	o Dom us	ով Տունք.
Բ.	a Dom o	'ի Տանէ:	a Dóm ibus	'ի Տանց:

Դ . Անուանք յանգեալք'ի u, յեզականն անփոփոխ մնան'ի յանգս. իսկ'ի յոգնականն հոլովին ըստ կանոնի չեզոքականաց . զր

Ո .	Corn u	Եղջիւր .	Córn ua	Եղջիւրք .
Ս .	Corn u	Եղջեր .	Córn uum	Եղջերաց .
Տ .	Corn u	յԵղջիւր .	Córn ibus	յԵղջերս .
Հ .	Corn u	զԵղջիւր .	Córn ua	զԵղջերս .
Կ .	o Corn u	ով Եղջիւր .	o Córn ua	ով Եղջիւրք .
Բ .	a Corn u	յԵղջերէ :	a Córn ibus	յԵղջերաց :

Ըստ այսմ հոլովին և բառքս .

Gelu Սառն . Genu Ծունր . Veru Շամփուր . Tónitru Որոտումն :

ՀՈԼՈՎՈՒՄՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

	Եզակի .		Յոգնակի .	
Ո .	Di es	Օր .	Di es	Աւուրք .
Ս .	Di éi	Աւուր .	Di érum	Աւուրց .
Տ .	Di éi	յՕր .	Di ébus	յԱւուրս .
Հ .	Di em	զՕր .	Di es	զԱւուրս .
Կ .	o Di es	ով Օր .	o Di es	ով Աւուրք .
Բ .	a Di e	յՕրէ :	a Di ébus	յԱւուրց :

Ըստ այսմ հոլովին և բառքս .

Res, rei	Իր, Ինչ.	Réquies, éi	Հանգիստ.	Pernícies, éi	Վնաս.
Rábies, éi	Կատաղութիւն.	Effígies, éi	Պատկեր .	Merídies, éi	Միջօրէայ .
Spécies, ciéi	Երևոյթ.	Fides, fídei	Հաւատ .	Fácies, éi	Երեսք :

Գիտեա զի որ ընդ հոլովմամբս անկանին բառք, ոչ ամենեքեան ունին յոգնակի սեռական , տրական և բացառական . այլ միայն Dies, Res, Spécies.

ՍԵՌՔ ԱՆՈՒԱՆՑ

Սեռք անուանց լատինացւոց չորք են . Արական , Իգական , Հասարակ , և Չէզոք . և որոշին 'ի նշանակութեանցն և 'ի վերջաւորութեանց :

Ըստ նշանակութեան արականք են

ա̄ . Յատուկ անուանք արանց , և անուանք հրեշտակաց, հողմոց, և այնց ամենեցուն՝ որ առնացի նկարին . որպ

Sylla	Սիլլա .	Júpiter	Արամազդ .	Michaël	Միքայէլ .
AEnéas	Ենէաս .	Apóllo	Ապողոն .	Notus	Հարաւ :

Բ. Անուանք պաշտամանց և արուեստից, որք արանց պատշաճին. օր.
Papa Պապ. Náuta Նաւավար. Scriba Դպիր:

Գ. Անուանք ամսոց. օր. Januárius Յունուար. Septémber Սեպտեմբեր:

Դ. Անուանք լերանց. օր. Athos Աթոս. Hélicon Եղիկոն:
Իգականք են AEtna Ետնա. Ida Իդա. OEta Ետա. Alpes Ալպեանք:
Չէզոք է Pélion կամ Pélium Պեղիոն:

Ե. Անուանք գետոց. օր. Tánais Տանայիս. Tíberis Տիբերիս:

Իգականք են ըստ նշանակութեան

Ա. Անուանք կանանց, և համբարուաց, և այնց ամենեցուն՝ որ իգակերպ նկարին. որպէս և առաքինութիւնք և ախտք. օր.

Pallas	Աթենաս.	Leucósia	Լեւկոսիա.	Cháritas	Սէր.
Júno	Հերայ.	Auróra	Արշալոյս.	Invídia	Նախանձ:

Բ. Անուանք աշխարհաց, գաւառաց, քաղաքաց և կղզեաց. օր.

AEgyptus	Եգիպտոս.	Sagúntus	Սագունտոն.	Cyprus	Կիպրոս.
Macedónia	Մակեդոնիա.	Venétiae	Վենետիկ.	Cous	Կով (կղզի):

Չէզոք են միայն յանգեալքն 'ի um, al, e կամ r; օր.
Byzántium Բիւզանդիոն. Hispal Հիսպալ. Tibur Տիբուր:
Չէզոք են դարձեալ անեզականքն յանգեալք a; օր. Susa Շօշ:
Արական են անեզականքն յանգեալք 'ի i; օր. Parísii Փարիզ:

Գ․ Անուանք ծառոց․ որ Pinus Եղեւին․ Pomus Խնձորի։

Չէզոք են Suber Սունկ․ Robor Կաղնի, և այլք սակաւք։

Արականք են Oleáster Վայրի ձիթենի․ Spinus Դամոն, և այլք սակաւք։

Հասարակք են ըստ նշանակութեան՝ որ կարեն պատշաճիլ արանց և կանանց․ որ Parens Ծնող․ Civis Քաղաքացի․ Testis Վկայ․ Haeres Ժառանգ։

Չէզոք են ըստ նշանակութեան

Ա․ Անուանք մետաղաց․ որ Aurum Ոսկի․ Argéntum Արծաթ։

Բ․ Անուանք պտղոց և արմտեաց․ որ Pirum Տանձ․ Cicer Սիսեռն։

Իգականք են Nux Ընկոյզ․ Ficus Թուզ, և այլք սակաւք։

Գ․ Անուանք նշանագրաց a, b, c, են․ որ A longum est. Այբն երկար է։

Իսկ ըստ վերջաւորութեանցն չմարթի հաստատուն ինչ կանոնս աւանդել։ Սակայն ստուգագոյնքն ՚ի նոցանէ և հանրական կանոնք այսոքիկ են (եթէ չիցեն բառքն ըստ նշանակութեանցն որոշեալ)․

Ա․ Ամենայն բառ յանգեալ ՚ի us ընդ երկրորդ հոլովմամբ, և անեզականք յանգեալք i, մեծաւ մասամբ արականք են։

Բ․ Յանգեալքն ՚ի a, որպէս և անեզականք յանգեալք ՚ի ae, մեծաւ մասամբ իգականք են։

Գ․ Յանգեալքն ՚ի u և ՚ի um, որպէս և անեզականքն ՚ի a, ևս և յանգեալքն ՚ի e լատինականք, որպէս Mare Ծով, չէզոք են։

ԱԾԱԿԱՆ

Ածականն մակդիր կամ յայտարար հանգամանաց իրին, համաձայնի ընդ գոյականին սեռիւ, թուով և հոլովով․ և հոլովի ըստ գոյականաց ։

Կէսք յածականաց ընդ առաջնով և ընդ երկրորդ հոլովմամբ անկանին՝ յանդեալ 'ի us, a, um , որպէս Bonus, bona, bonum ; կամ 'ի er, a, um, որպէս Niger, nigra, nigrum.

Օրինակ Ա․

		Ար․	Իգ․	Չէզ․	
Եզ․	Ո․	Bon us,	Bon a,	Bon um	Բարի․
	Ս․	Bon i,	Bon ae,	Bon i	Բարւոյ․
	Տ․	Bon o,	Bon ae,	Bon o	'ի Բարի․
	Հ․	Bon um,	Bon am,	Bon um	զԲարի․
	Կ․	o Bon e,	o Bon a,	o Bon um	ով Բարի․
	Բ․	a Bon o,	a Bon a,	a Bon o	'ի Բարւոյ ։

Յոգն.	Ո.	Bon i,	Bon ae,	Bon a	Բարիք .
	Ս.	Bon órum,	Bon árum,	Bon órum	Բարեաց .
	Տ.	Bon is,	Bon is,	Bon is	՚ի Բարիս .
	Հ.	Bon os,	Bon as,	Bon a	զԲարիս .
	Կ.	o Bon i,	o Bon ae,	o Bon a	ո՛վ Բարիք .
	Բ.	a Bon is,	a Bon is,	a Bon is	՚ի Բարեաց :

Այսպէս հոլովին և ածականքս .

Sanctus, sancta, sanctum	Սուրբ .	Doctus, docta, doctum	Գիտուն .
Magnus, magna, magnum	Մեծ .	Pius, pia, pium	Գթած , բարեպաշտ :

Օրինակ Բ.

		Ար.	Իգ.	Չէզ.	
Եզ.	Ո.	Niger,	Nigr a,	Nigr um	Սեաւ .
	Ս.	Nigr i,	Nigr ae,	Nigr i	Սևոյ .
	Տ.	Nigr o,	Nigr ae,	Nigr o	՚ի Սեաւ .
	Հ.	Nigr um,	Nigr am,	Nigr um	զՍեաւ .
	Կ.	o Niger,	o Nigr a,	o Nigr um	ո՛վ Սեաւ .
	Բ.	a Nigr o,	a Nigr a,	a Nigr o	՚ի Սևոյ :

Յոգ. Ո.	Nigr i,	Nigr ae,	Nigr a	Սեաւք.
Ս.	Nigr órum,	Nigr árum,	Nigr órum	Սեւոց.
Տ.	Nigr is,	Nigr is,	Nigr is	'ի Սեաւս.
Հ.	Nigr os,	Nigr as,	Nigr a	զՍեաւս.
Կ.	o Nigr i,	o Nigr ae,	o Nigr a	ովՍեաւք.
Բ.	a Nigr is,	a Nigr is,	a Nigr is	'ի Սեւոց:

Սոյնպէս հոլովին և ածականքս.

Liber, líbera, líberum	Ազատ.	Miser, mísera, míserum	Հէգ.
Piger, pigra, pigrum	Հեղգ.	Pulcher, pulchra, pulchrum	Գեղեցիկ:

Այլք յածականաց անկանոնն առ հասարակ ընդ երրորդ հոլովմամբ. յորոց ոմանք միով ձայնիւ յերիս սեռս են վարին, բաց յեզակի հայցականէն և յոգնակի ուղղականէ, 'ի հայցականէ և 'ի կոչականէ չէզոքականին, ըստ չէզոք գոյականաց. որ

	Ար. և Իգ. Չէզ.			Ար. և Իգ.	Չէզ.	
Ո.	Prudens	Զգօն.		Prudént es,	Prudént ia	Զգօնք.
Ս.	Prudént is	Զգօնի.		Prudént ium		Զգօնից.
Տ.	Prudént i	ցԶգօն.		Prudént ibus		ցԶգօնս.
Հ.	Prudént em, Prudens	զԶգօն.		Prudént es,	Prudént ia	զԶգօնս.
Կ.	o Prudens	ով Զգօն.		o Prudént es,	Prudént ia	ովԶգօնք.
Բ.	a Prudént e	'ի Զգօնէ.		a Prudént ibus		'ի Զգօնից:

Սոյնպէս հոլովին և ածականքս .

Felix, felícis	Երջանիկ .	Sápiens, sapiéntis	Իմաստուն .
Velox, velócis	Երագ .	Áudax, audácis	Յանդուգն :

Այլք ևս յանկելոցն ընդ երրորդ հոլովմամբ, յուղղականն, 'ի հայցականն և 'ի կոչականն չէզոքականին այլով ձայնիւ վարին . ոպ

	ար . և իգ . չէզ .			ար . և իգ . չէզ .		
Ո .	Fort is, Fort e	Հզօր .		Fort es,	Fórt ia	Հզօրք .
Ս .	Fort is	Հզօրի .		Fórt ium		Հզօրաց .
Տ .	Fort i	'ի Հզօր .		Fórt ibus		'ի Հզօրս .
Հ .	Fort em, Fort e	զՀզօր .		Fort es,	Fórt ia	զՀզօրս .
Կ .	o Fort is, Fort e	ով Հզօր .		o Fort es,	Fórt ia	ով Հզօրք .
Բ .	a Fort i	'ի Հզօրէ :		a Fórt ibus,		'ի Հզօրաց :

Այսպէս հոլովին և ածականքս .

Comis, comis, come	Հեզաբարոյ .	Suávis, suávis, suáve	Քաղցր .
Fácilis, fácilis, fácile	Դիւրին .	Omnis, omnis, omne	Ամենայն .
Levis, levis, leve	Թեթև .	U'tilis, útilis, útile	Պիտանի :

Են և ածականք ընդ երրորդ հոլովմամբ, որք երրեակ ձայնիւ վարին յուղղականն և 'ի կոչականն եզականին. զր

	Ար.	Իգ.	Չէզ.	
Ո.	Céleber,	Célebr is,	Célebr e	Երևելի.
Ս.	Célebr is,	Célebr is,	Célebr is	Երևելւոյ.
Տ.	Célebr i	Célebr i,	Célebr i	յԵրևելի
Հ.	Célebr em,	Célebr em,	Célebr e	զԵրևելի.
Կ.	o Céleber,	o Célebr is,	o Célebr e	ովԵրևելի.
Բ.	a Célebr i,	a Célebri,	a Célebr i	յԵրևելւոյ.

ԱՍՏԻՃԱՆՔ ԱԾԱԿԱՆԱՑ

Երրեակ աստիճանք ածականաց են և առ լատինս. Դրական, Բաղդատական և Գերադրական:

Բաղդատականն 'ի դրականէն ածանցի՝ յաւելմամբ 'ի վերայ սեռական կամ տրական հոլովոյ գոյականին՝ որ յանգեցի 'ի i, զմասնիկս or կամ us. Յանգեալքն 'ի or, արական են և իգական. և յանգեալքն 'ի us, չէզոք կամ մակբայ. զր
Sanctus Սուրբ, sancti: Sánctior և Sánctius Սրբագոյն.
Fortis Հզօր, forti: Fórtior և Fórtius Հզօրագոյն:

Սոյնպէս և գերադրականքն կազմին յաւելմամբ 'ի վերջս սեռական կամ տրական հոլովոյ դրականին զմասնիկս ssimus, ssima, ssimum, օր

Sanctíssimus, sanctíssima, sanctíssimum Ամենասուրբ. Fortíssimus, fortissima, fortissimum Ամենազօր:

Զարտուղութիւնք :

ա. Ածականացն յանգելոց 'ի er, գերադրականքն կազմին յեզակի ուղղականէ դրականին յաւելմամբ մասնկանս rimus ; օր Pulcher, Pulchérrimus, pulcherrima, pulcherrimum Ամենագեղեցիկ :

բ. Յանգելոցն 'ի lis, որպէս Fácilis Դիւրին, Húmilis Խոնարհ, Símilis Նման, գերադրականքն լինին illimus, օր facíllimus, humíllimus, simíllimus.

Բայց բառս Utilis Օգտակար, ըստ կանոնի լինի utilíssimus.

գ. Ածականացն յանգելոց 'ի dicus, ficus, volus, օր Malédicus Չարախօս, Benéficus Բարերար, Benévolus Բարեսէր, բաղդատականն լինի entior, և գերադրականն entíssimus; օր maledicéntior, maledicentíssimus; benevoléntior, benevolentíssimus.

դ. Իսկ չորից ածականացս Bonus, Malus, Parvus, Magnus, բաղդատականք և գերադրականք այլազգ կազմին. այսինքն

Bonus	Բարի,	Mélior	Բարեգոյն,	O'ptimus	Ամենաբարի.
Malus	Չար,	Péjor	Չարագոյն,	Péssimus	Ամենաչար.
Parvus	Փոքր,	Minor	Փոքրագոյն,	Mínimus	Ամենափոքր.
Magnus	Մեծ,	Májor	Մեծագոյն,	Máximus	Ամենամեծ:

Է. Յանգելոցն ius, eus, uus, ոչ բաղդատական է, և ոչ գերադրական. այլ առաւելական մակբայիւքս վարին Magis Առաւել, Máxime Մեծապէս, յոյժ. օր.

Pius Բարեպաշտ, Magis pius Բարեպաշտագոյն, Máxime pius Ամենաբարեպաշտ:

ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Կրկին են Թուական անուանք. Դրական, և Դասական: Դրականն զԹիւն միայն ցուցանէ. իսկ դասականն զկարգ և զդասաւորութիւն իւրաքանչիւր իրաց:

ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ ԴՐԱԿԱՆՔ

Թուականքս Unus I, Մի, Duo II, Երկու, Tres III, Երեք, հոլովին այսպէս.

	ար.	էգ.	չէզ.	
Ո.	Unus,	Una,	Unum	Մի.
Ս.	Unius,	Unius,	Unius	Միոյ.
Տ.	Uni,	Uni,	Uni	Միում.
Հ.	Unum,	Unam,	Unum	զՄի.
Բ.	ab Uno,	ab Una,	ab Uno	'ի Միոջէ ։

Ըստ այսմ հոլովին

Ullus, la, lum Ո՛մն, ո՛ք. ի՛մն, ի՛նչ ։
Nullus, la, lum Ոչ ոք, ոչ ինչ ։
Solus, la, lum Միայն, միայնակ ։
Totus, ta, tum Ամենայն, բովանդակ ։
Álius, lia, liud Այլ ոք, այլ ինչ ։
Álter, ra, rum Այլ, միւս ։
Uter, tra, trum Մին յերկուց. ո՞ յերկուց ։
Néuter, tra, trum Ոչ ոք յերկուց. ոչ մին և ոչ միւսն ։
Utérque, utráque, utrúmque Երկաքանչիւր ևս ։
Altéruter, tra, trum Մին յերկուց, մին կամ միւսն ։

	ար.	էգ.	չէզ.	
Ո.	Duo,	Duae,	Duo	Երկուք.
Ս.	Duórum,	Duárum,	Duórum	Երկուց.
Տ.	Duóbus,	Duábus,	Duóbus	ցԵրկուս.
Հ.	Duos կամ Duo,	Duas,	Duo	զԵրկուս.
Բ.	a Duóbus,	a Duábus,	a Duóbus	յԵրկուց ։

Նոյնպէս հոլովի և Ambo, Ambae, Ambo Երկաքանչիւր ։

	Ար․	Իգ․	Չէզ․	
Ո․	Tres,	Tres,	Tria	Երեք․
Ս․	Trium,	Trium,	Trium	Երից․
Տ․	Tribus,	Tribus,	Tribus	ցԵրիս․
Հ․	Tres,	Tres,	Tria	զԵրիս․
Բ․	a Tribus,	a Tribus,	a Tribus	յԵրից ։

Իսկ այլքն ՚ի Չորից մինչև ցՀարիւր անհոլովք են․

Quátuor	IV	Չորք․
Quínque	V	Հինգ․
Sex	VI	Վեց․
Septem	VII	Եօթն․
Octo	VIII	Ութ․
Novem	IX	Ինն․
Decem	X	Տասն․
U'ndecim	XI	Մետասան․
Duódecim	XII	Երկոտասան․
Trédecim	XIII	Երեքտասան․
Quatuórdecim	XIV	Չորեքտասան․
Quíndecim	XV	Հնգետասան․
Séxdecim	XVI	Վեշտասան․
Septéndecim	XVII	Եօթնևտասան․
Octódecim Duo de vigínti	XVIII	Ութևտասան․
Un de vigínti	XIX	Իննևտասան․
Vigínti	XX	Քսան․
Unus et vigínti	XXI	Քսան և մի․
Duo et vigínti	XXII	Քսան և երկու․
Tres et vigínti	XXIII	Քսան և երեք․
Vigínti quátuor	XXIV	Քսան և չորք․
Vigínti quínque	XXV	Քսան և հինգ․
Vigínti sex	XXVI	Քսան և վեց․

Viginti septem	XXVII	Քսան և եօթն.	Septuaginta	LXX	Եօթանասուն.
Duodetriginta	XXVIII	Քսան և ութ.	Octoginta	LXXX	Ութսուն.
Un de triginta	XXIX	Քսան և ինն.	Nonaginta	XC	Իննսուն.
Triginta	XXX	Երեսուն.	Centum	C	Հարիւր.
Quadraginta	XL	Քառասուն.	Ducénti, tae, ta	CC	Երկերիւր.
Quinquaginta	L	Յիսուն.	Trecénti, tae, ta	CCC	Երեքհարիւր.
Sexaginta	LX	Վաթսուն.	Mille	M կամ CIↃ	Հազար։

Թուականքս Ducénti և Trecénti հոլովին որպէս Boni, bonae, bona ; իսկ Mille եզակի անհոլով է. յոգնակի հոլովի ըստ օրինի չէզոքական, Míllia, míllium են ։

ԴԱՍԱԿԱՆՔ

Primus	Առաջին.	Octávus	Ութերորդ.
Secúndus / Álterus	Երկրորդ.	Nonus	Իններորդ.
Tértius	Երրորդ.	Décimus	Տասներորդ.
Quártus	Չորրորդ.	Undécimus	Մետասաներորդ.
Quíntus	Հինգերորդ.	Duodécimus	Երկոտասաներորդ.
Sextus	Վեցերորդ.	Décimus tértius / Tértius décimus	Երեքտասաներորդ.
Séptimus	Եօթներորդ.	Vigésimus	Քսաներորդ.

Trigésimus	Երեսներորդ .	Octagésimus	Ութսներորդ .
Quadragésimus	Քառասներորդ .	Nonagésimus	Իննսներորդ .
Quinquagésimus	Յիսներորդ .	Centésimus	Հարիւրերորդ .
Sexagésimus	Վաթսներորդ .	Millésimus	Հազարերորդ ։
Septuagésimus	Եօթանասներորդ .		

Սոքա ամենեքեան հոլովին իբրև զ Bonus, bona, bonum.

Բացյայսցանէ են և Տրամաբաշխականք ,

Síngulí, lae, la	Մի մի .	Terni, ternae, terna	Երեք երեք .
Bini, binae, bina	Երկու երկու .	Quatérni, nae, na	Չորք չորք են ։

Այլ են և կրկնականք Duplex Երկպատիկ, Triplex Երեքպատիկ , են ։

ԴԵՐԱՆՈՒՆ

Դերանունն զտեղի անուան փոխանակեալ, երբ դիմաց է յայտարար ։ Եւ է 'ի Նոցանէ ոմն Էական, ոմն Ցուցական, ոմն Ստացական, և այլ ոմն Ցարաբերական ։

ԷԱԿԱՆՔ

Եզակի .			Յոգնակի .	
Ո .	Ego	Ես .	Nos	Մեք
Ս .	Mei	Իմ .	Nostrum կամ Nostri	Մեր .
Տ .	Mihi	Ինձ, ցիս .	Nobis	Մեզ .
Հ .	Me	զիս .	Nos	զՄեզ .
Բ .	a Me	յինէն ։	a Nobis	'ի Մէնջ ։

	Եզական ·			Յոգնական ·	
Ո ·	Tu	Դու		Vos	Դուք ·
Ս ·	Tui	Քո ·		Vestrum կամ Vestri	Ձեր ·
Տ ·	Tibi	Քեզ, ցքեզ ·		Vobis	Ձեզ ·
Հ ·	Te	զՔեզ ·		Vos	զՁեզ ·
Կ ·	o Tu	ով Դու ·		o Vos	ով Դուք ·
Բ ·	a Te	'ի Քէն ։		a Vobis	'ի Ձէնջ ։

Եզ· և Յոգն· Ս ·	Sui	իւր, իւրեանց ·	Հ ·	Se	զինքն, զինքեանս ·
Տ ·	Sibi	ինքեան, ինքեանց ·	Բ ·	a Se	յիւրմէ, յիւրեանց ։

ՅՈՒՑԱԿԱՆՔ

	Եզական ·				Յոգնական ·			
	ար ·	իգ ·	չէզ ·		ար ·	իգ ·	չէզ ·	
Ո ·	Is,	Ea,	Id	Այն ·	Ii կամ Ei,	Eae,	Ea	Այնք ·
Ս ·	Éjus,	Éjus,	Éjus	Այնր ·	Eórum,	Eárum,	Eórum	Այնց ·
Տ ·	Ei,	Ei,	Ei	Այնմ ·	Iis կամ Eis,	Eis,	Eis	Այնց ·
Հ ·	Eum,	Eam,	Id	զԱյն ·	Eos,	Eas,	Ea	զԱյնս ·
Բ ·	ab Eo,	ab Ea,	ab Eo	յԱյնմանէ ։	ab Iis կամ Eis,	ab Eis,	ab Eis	յԱյնց ։

		ար.	իգ.	չէզ.	
Եզ.	Ո.	Idem,	Éadem,	Idem	Նոյն.
	Ս.	Ejúsdem,	Ejúsdem,	Ejúsdem	Նորին.
	Տ.	Éidem,	Éidem,	Éidem	Նմին.
	Հ.	Éumdem,	Éamdem,	Idem	զՆոյն.
	Բ.	ab Eódem,	ab Eádem,	ab Eódem	'ի Նմանէ:
Յոգն.	Ո.	I'idem,	Éaedem,	Éadem	Նոյնք.
	Ս.	Eorúmdem,	Earúmdem,	Eorúmdem	Նոցին.
	Տ.	Iísdem կամ Eísdem,	Eísdem,	Eísdem	Նոցունց.
	Հ.	Eósdem,	Eásdem,	Éadem	զՆոսին.
	Բ.	ab Iísdem կամ Eísdem,	ab Eísdem,	ab Eísdem	'ի Նոցունց:

	ար.	իգ.	չէզ.		ար.	իգ.	չէզ.	
Ո.	Hic,	Haec,	Hoc	Այս.	Hi,	Hae,	Haec	Այսոքիկ.
Ս.	Hújus,	Hújus,	Hújus	Այսր.	Horum,	Harum,	Horum	Այսոցիկ.
Տ.	Huic,	Huic,	Huic	Այսմ.	His,	His,	His	Այսոցիկ.
Հ.	Hunc,	Hanc,	Hoc	զԱյս.	Hos,	Has,	Haec	զԱյսոսիկ.
Բ.	ab Hoc,	ab Hac,	ab Hoc	յԱյսմանէ.	ab His,	ab His,	ab His	յԱյսցանէ:

	Եզական.				Յոգնական.			
	ար.	իգ.	չէզ.		ար.	իգ.	չէզ.	
Ո.	Ille,	Illa,	Illud	Նա.	Illi,	Illae,	Illa	Նոքա.
Ս.	Illíus,	Illíus,	Illíus	Նորա.	Illórum,	Illárum,	Illórum	Նոցա.
Տ.	Illi,	Illi,	Illi	Նմա.	Illis,	Illis,	Illis	Նոցա.
Հ.	Illum,	Illam,	Illud	զՆա.	Illos,	Illas,	Illa	զՆոսա.
Բ.	ab Illo,	ab Illa,	ab Illo	՚ի Նմանէ.	ab Illis,	ab Illis,	Illis	՚ի Նոցանէ:

	ար.	իգ.	չէզ.		ար.	իգ.	չէզ.	
Ո.	Ipse,	Ipsa,	Ipsum	Ինքն.	Ipsi,	Ipsae,	Ipsa	Ինքեանք.
Ս.	Ipsíus,	Ipsíus,	Ipsíus	Ինքեան.	Ipsórum,	Ipsárum,	Ipsórum	Ինքեանց.
Տ.	Ipsi,	Ipsi,	Ipsi	յԻնքն.	Ipsis,	Ipsis,	Ipsis	յԻնքեանս.
Հ.	Ipsum,	Ipsam,	Ipsum	զԻնքն.	Ipsos,	Ipsas,	Ipsa	զԻնքեանս.
Բ.	ab Ipso,	ab Ipsa,	ab Ipso	յԻնքենէ:	ab Ipsis,	ab Ipsis,	ab Ipsis	յԻնքեանց:

ՍՏԱՑԱԿԱՆՔ

Սոքա գրեթէ ամենեքեան հոլովին ըստ ածականացն Bonus, bona, bonum, կամ Niger, nigra, nigrum; այլ դիցուք օրինակս կրկին .

	Եզակի .				Յոգնակի .			
	ար .	իգ .	չէզ .		ար .	իգ .	չէզ .	
Ո .	Meus,	Mea,	Meum	իմ .	Mei,	Méae,	Mea	իմք .
Ս .	Mei,	Méae,	Mei	իմոյ .	Meórum,	Meárum,	Meórum	իմոց .
Տ .	Meo,	Méae,	Meo	իմում .	Meis,	Meis,	Meis	ցիմս .
Հ .	Meum,	Meam,	Meum	զիմ .	Meos,	Meas,	Mea	զիմս .
Կ .	o Mi,	o Mea,	o Meum	ով իմ .	o Mei,	o Méae,	a Mea	ով իմք .
Բ .	a Meo,	a Mea,	a Meo	յիմմէ :	a Meis,	a Meis,	o Meis	յիմոց :

Ըստ այսմ հոլովին և ստացականքս . Tuus, tua, tuum քո . Cújus, cúja, cújum Որոյ . Suus, sua, suum իւր : Սոցա կոչական ոչ է :

		ար.	իգ.	չէզ.	
Եզակի.	Ո.	Noster,	Nostra,	Nostrum	Մեր.
	Ս.	Nostri,	Nostrae,	Nostri	Մերոյ.
	Տ.	Nostro,	Nostrae,	Nostro	Մերում.
	Հ.	Nostrum,	Nostram,	Nostrum	զՄեր.
	Կ.	o Noster,	o Nostra,	o Nostrum	ով Մեր.
	Բ.	a Nostro,	a Nostra,	a Nostro	'ի Մերմէ :

		ար.	իգ.	չէզ.	
Յոգնակի.	Ո.	Nostri,	Nostrae,	Nostra	Մերք.
	Ս.	Nostrórum,	Nostrárum,	Nostrórum	Մերոց.
	Տ.	Nostris,	Nostris,	Nostris	Մերոց.
	Հ.	Nostros,	Nostras,	Nostra	զՄերս.
	Կ.	o Nostri,	o Nostrae,	o Nostra	ով Մերք.
	Բ.	a Nostris,	a Nostris,	a Nostris	'ի Մերոց :

Սոյնպէս հոլովի և Vester, vestra, vestrum Ձեր :

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆՔ

	Եզակի.				Յոգնակի.			
	ար.	իգ.	չէզ.		ար.	իգ.	չէզ.	
Ո.	Qui,	Quae,	Quod	Որ.	Qui,	Quae,	Quae	Որք.
Ս.	Cújus,	Cújus,	Cújus	Որոյ.	Quórum,	Quárum,	Quórum	Որոց.
Տ.	Cui,	Cui,	Cui	Որում.	Quíbus կմ Quéis,	Quíbus,	Quíbus	յՈրս.
Հ.	Quem,	Quam,	Quod	զՈր.	Quos,	Quas,	Quae	զՈրս.
Բ.	a Quo,	a Qua,	a Quo	յՈրմէ:	a Quíbus,	a Quíbus,	a Quíbus	յՈրոց:

Սոյնպէս հոլովին և բաղդեալքն 'ի սմանէ. որպէս

Quídam,	Quaédam,	Quóddam	Ոմն, իմն:
Quicúmque,	Quaecúmque,	Quodcúmque	Որ ոք, ո ոք. որ ինչ:
Quílibet,	Quaélibet,	Quódlibet	Ո ոք և է. որ ինչ և իցէ:
Quívis,	Quaévis,	Quódvis	Ո ոք և է, որ ոք և իցէ. իւրաքանչիւր ոք կամ ինչ:

Հարցական անունս Quis? Ո՞, հոլովի հանգոյն յարաբերականին Qui; միայն եզակի ուղղական և հայցական հոլովք չէզոքականին կրկնակի լինին. որպէս Quod կմ Quid. Նոյնպէս և 'ի բաղդեալսն 'ի սմանէ հոլովի միայն Quis; որպէս

Quísnam,	Quaénam,	Quódnam և	Quídnam	Ո, զի՞նչ․ ո ոք երբէք ։
Quíspiam,	Quaépiam,	Quódpiam և	Quídpiam	Ո, ոմն․ իմն, ինչ ։
Quísquam,	Quaéquam,	Quódquam և	Quídquam	Որ ոք և իցէ․ որ ինչ և է ։
Quísque,	Quaéque,	Quódque և	Quídque	Իւրաքանչիւր ոք, ամենայն ինչ․
Quísquis,	Quaéque,	Quídquid և	Quciquid	Որ ոք, ո ոք․ որ ինչ ։

Յետագայ բարդելոցդ ուղղական իգականին, և յոգնակի ուղղական չէզոքականին յանգին 'ի a ։

Áliquis,	Áliqua,	Áliquod և	Áliquid	Ոմն, ոք․ իմն, ինչ ։
Nécquis,	Nécqua,	Nécquod և	Nécquid	Ոչ ոք․ ոչ ինչ ։
Écquis,	Écqua,	Écquod և	Écquid	Ո ոք․ զի՞նչ ինչ ։
Síquis,	Síqua,	Síquid		Եթէ ոք․ եթէ ինչ ։

Իսկ բարդեալն 'ի Թուականէն Unus, Unusquisque, հոլովի այսպէս․

	ար․	իգ․	չէզ․	
Ո․	Unusquísque,	Unaquaéque,	Unumquódque	Իւրաքանչիւր․
Ս․	Uniuscujúsque,	Uniuscujúsque,	Uniuscujúsque	Իւրաքանչիւրոյ․
Տ․	Unicuíque,	Unicuíque,	Unicuíque	Իւրաքանչիւրում․
Հ․	Unumquémque,	Unamquámque,	Unumquódque	զԻւրաքանչիւր․
Բ․	ab Unoquóque,	ab Unaquáque,	ab Unoquóque	յԻւրաքանչիւրմէ ։

Սորա յոգնական ոչ է ։

ԲԱՅ

Քառեակ լծորդութիւնք են բայից առ լատինացիս, ընդ որովք այլք առ հասարակ անկանին. և որոշին 'ի միմեանց վերջաւորութեամբ աներևութիցն.

Առաջնոյն աներևոյթ յանգի are, որ Amáre Սիրել.
Երկրորդին յանգի յերկար ere, որ Monére Ազդել.
Երրորդին 'ի սուղ ere, որ Légere Ընթեռնուլ.
Չորրորդին աներևոյթ յանգի ire, որ Audíre Լսել:

Զայսոցիկ լծորդութիւնս դիցուք կարգաւ, նախ զներգործականացդ, ապա զկրաւորականաց և զկրաւորակերպից, և ապա զարտուղեաց: Այլ յառաջ քան զամենեսին զարմատն նոցա զէական բայս Esse Լինել, գոլ:

ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ԷԱԿԱՆ ԲԱՅԻՍ ESSE

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

Ներկայ.	Sum	Եմ.	Sumus	Եմք.
	Es	Ես.	Estis	Էք.
	Est	Է.	Sunt	Են:

Անկատար․	Er am	էի․	Er ámus	էաք․
	Er as	էիր․	Er átis	էիք․
	Er at	էր․	Er ant	էին։
Կատարեալ․	Fu i	Եղէ․	Fú imus	Եղաք․
	Fu ísti	Եղեր․	Fu ístis	Եղէք․
	Fu it	Եղեւ․	Fu érunt կամ Fu ére	Եղեն։
Գերակատար․	Fú eram	Եղեալ էի․	Fu erámus	Եղեալ էաք․
	Fú eras	Եղեալ էիր․	Fu erátis	Եղեալ էիք․
	Fú erat	Եղեալ էր․	Fú erant	Եղեալ էին։
Ապառնի․	Ero	Եղէց․	Érimus	Եղիցուք․
	Eris	Եղիցիս․	Éritis	Եղիջիք․
	Erit	Եղիցի․	Erunt	Եղիցին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

			Simus	Լիցուք․
	Es կամ Esto	Լեր․	Este կամ Estóte	Լիջիք․
	Esto ille	Լիցի․	Sunto	Լիցին։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Ներկայ .	Sim	իցեմ .	Simus	իցեմք .
	Sis	իցես .	Sitis	իցէք .
	Sit	իցէ .	Sint	իցեն ։
Անկատար .	Essem կամ forem	Էի կամ լինէի .	Essémus	Էաք կամ լինէաք .
	Esses կամ fores	Էիր , լինէիր .	Essétis	Էիք , լինէիք .
	Esset կամ foret	Էր , լինէր .	Essent կամ forent	Էին , լինէին ։
Կատ. և Ապ .	Fúero կամ fúerim	Լինիցիմ կամ լեալ իցեմ .	Fu érimus	Լինիցիմք .
	Fúeris	Լինիցիս կամ լեալ իցես .	Fu éritis	Լինիցիք .
	Fú erit	Լինիցի կամ լեալ իցէ .	Fú erint	Լինիցին ։
Գերակատար .	Fu íssem	Լեալ էի .	Fu issémus	Լեալ էաք .
	Fu ísses	Լեալ էիր .	Fu issétis	Լեալ էիք .
	Fu ísset	Լեալ էր .	Fu íssent	Լեալ էին ։

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Ներկայ, Esse լինել. Անցեալ, Fu ísse լեալ. Ապառնի, Fore կամ Futúrum esse լինելոց գոլ։

Ընդունելութիւն ապառնի, Futúrus, ra, rum լինելոց, հանդերձեալ։

Ըստ այսմ լծորդին և բայքս.

Absum,	abes,	ábfui,	ábero,	abésse	Հեռի եմ, կամ հեռանամ.
Adsum,	ades,	ádfui,	ádero,	adésse	Մերձ եմ, մերձենամ։
Desum,	dees,	défui,	déero,	deésse	Պակասիմ, նուազեմ, յետնիմ։
Possum,	potes,	pótui,	pótero,	posse	Կարեմ, կարող լինիմ։
Prosum,	prodes,	prófui,	pródero,	prodésse	Օգտեմ։

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅՔ

ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

Ներկայ.

Am o	Սիրեմ.	Am ámus	Սիրեմք.
Am as	Սիրես.	Am átis	Սիրէք.
Am at	Սիրէ.	Am ant	Սիրեն:

Անկատար.

Am ábam	Սիրէի.	Am abámus	Սիրէաք.
Am ábas	Սիրէիր.	Am abátis	Սիրէիք.
Am ábat	Սիրէր.	Am ábant	Սիրէին:

Կատարեալ.

Am ávi	Սիրեցի.	Am ávimus	Սիրեցաք.
Am avísti	Սիրեցեր.	Am avístis	Սիրեցիք.
Am ávit	Սիրեաց.	Am avérunt կամ Am avére	Սիրեցին:

Գերակատար ·

Am áveram	Սիրեալ էի ·	Am averámus	Սիրեալ էաք ·
Am áveras	Սիրեալ էիր ·	Am averátis	Սիրեալ էիք ·
Am áverat	Սիրեալ էր ·	Am áverant	Սիրեալ էին :

Ապառնի ·

Am ábo	Սիրեցից ·	Am ábimus	Սիրեսցուք ·
Am ábis	Սիրեսցես ·	Am ábitis	Սիրեսջիք ·
Am ábit	Սիրեսցէ ·	Am ábunt	Սիրեսցեն :

Կատարեալ և Ապառնի ·

Am ávero	Սիրէի ·	Am avérimus	Սիրէաք ·
Am áveris	Սիրէիր ·	Am avéritis	Սիրէիք ·
Am áverit	Սիրէր ·	Am áverint	Սիրէին :

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

		Am émus	Սիրեսցուք ·
Am a կամ Am áto	Սիրեա ·	Am áte կամ Am atóte	Սիրեսջիք ·
Am áto	Սիրեսցէ ·	Am ánto	Սիրեսցեն :

ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

	Ներկայ ·		
Am em	Սիրիցեմ ·	Am émus	Սիրիցեմք ·
Am es	Սիրիցես ·	Am étis	Սիրիցէք ·
Am et	Սիրիցէ ·	Am ent	Սիրիցեն :
	Անկատար ·		
Am árem	Սիրէի ·	Am arémus	Սիրէաք ·
Am áres	Սիրէիր ·	Am arétis	Սիրէիք ·
Am áret	Սիրէր ·	Am árent	Սիրէին :
	Կատարեալ ·		
Amáv erim	Սիրեալ իցեմ ·	Amav érimus	Սիրեալ իցեմք ·
Amáv eris	Սիրեալ իցես ·	Amav éritis	Սիրեալ իցէք ·
Amáv erit	Սիրեալ իցէ ·	Amáv erint	Սիրեալ իցեն :
	Գերակատար ·		
Amav íssem	Սիրեալ էի ·	Amav issémus	Սիրեալ էաք ·
Amav ísses	Սիրեալ էիր ·	Amav issétis	Սիրեալ էիք ·
Amav ísset	Սիրեալ էր ·	Amav íssent	Սիրեալ էին :

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Ներկայ, Am áre Սիրել. Անցեալ, Amavísse Սիրեալ գոլ:
Ապառնի, Am atúrum կամ Amatúram esse Սիրելոց գոլ:
Ընդունելութիւն ներկայ, Am ans, am ántis Սիրող. սիրելով:
Ընդունելութիւն ապառնի, Am atúrus, ra, rum Սիրելոց:
Դերբայ ա̄. Am átum Առ 'ի սիրել:
Դերբայ բ̄. Am ándi Սիրելոյ. Am ándo Սիրելով. Am ándum Առ 'ի սիրել:

Ըստ առաջնոյ լծորդութեանս խոնարհին և առաջիկայ բայքս.

Láudo,	láudas,	laudávi,	laudátum	Գովեմ.
Accúso,	accúsas,	accusávi	accusátum	Ամբաստանեմ.
Damno,	damnas,	damnávi,	damnátum	Դատապարտեմ.
Vitúpero,	vitúperas,	vituperávi,	vituperátum	Պարսաւեմ.
Mando,	mandas,	mandávi,	mandátum	Պատուիրեմ.
Núncio,	núncias,	nunciávi,	nunciátum	Ազդ առնեմ.
Patro,	patras,	patrávi,	patrátum	Գործեմ, եմ:

ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

Ներկայ ·

Món eo	Ազդեմ ·	Mon émus	Ազդեմք ·
Mon es	Ազդես ·	Mon étis	Ազդէք ·
Mon et	Ազդէ ·	Mon ent	Ազդեն ։

Անկատար ·

Mon ébam	Ազդէի ·	Mon ebámus	Ազդէաք ·
Mon ébas	Ազդէիր ·	Mon ebátis	Ազդէիք ·
Mon ébat	Ազդէր ·	Mon ébant	Ազդէին ։

Կատարեալ ·

Mónu i	Ազդեցի ·	Monú imus	Ազդեցաք ·
Monu ísti	Ազդեցեր ·	Monu ístis	Ազդեցէք ·
Mónu it	Ազդեաց ·	Monu érunt կամ Monu ére	Ազդեցին ։

Գերակատար ·

Monú eram	Ազդեալ էի ·	Monu erámus	Ազդեալ էաք ·
Monú eras	Ազդեալ էիր ·	Monu erátis	Ազդեալ էիք ·
Monú erat	Ազդեալ էր ·	Monú erant	Ազդեալ էին :

Ապառնի ·

Mon ébo	Ազդեցից ·	Mon ébimus	Ազդեսցուք ·
Mon ébis	Ազդեսցես ·	Mon ébitis	Ազդեսջիք ·
Mon ébit	Ազդեսցէ ·	Mon ébunt	Ազդեսցեն :

Կատարեալ Ապառնի ·

Monú ero	Ազդէի ·	Monu érimus	Ազդէաք ·
Monú eris	Ազդէիր ·	Monu éritis	Ազդէիք ·
Monú erit	Ազդէր ·	Monú erint	Ազդէին :

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

		Mon émus	Ազդեսցուք ·
Mon e կամ Mon éto	Ազդեա ·	Mon éte	Ազդեցէք ·
Mon éto	Ազդեսցէ ·	Mon énto	Ազդեսցեն :

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Ներկայ ·

Món eam	Ազդիցեմ.	Mon eámus	Ազդիցեմք ·
Món eas	Ազդիցես ·	Mon eátis	Ազդիցէք ·
Món eat	Ազդիցէ ·	Món eant	Ազդիցեն ։

Անկատար ·

Mon érem	Ազդէի ·	Mon erémus	Ազդէաք ·
Mon éres	Ազդէիր ·	Mon erétis	Ազդէիք ·
Mon éret	Ազդէր ·	Mon érent	Ազդէին ։

Կատարեալ ·

Monú erim	Ազդեալ իցեմ ·	Monu érimus	Ազդեալ իցեմք ·
Monú eris	Ազդեալ իցես ·	Monu éritis	Ազդեալ իցէք ·
Monú erit	Ազդեալ իցէ ·	Monú erint	Ազդեալ իցեն ։

Գերակատար ·

Monu íssem	Ազդեալ էի ·	Monu issémus	Ազդեալ էաք ·
Monu ísses	Ազդեալ էիր ·	Monu issétis	Ազդեալ էիք·
Monu ísset	Ազդեալ էր ·	Monu íssent	Ազդեալ էին ։

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Ներկայ, Mon ére Ազդել. Անցեալ, Monu ísse Ազդեալ գոլ.
Ապառնի, Mon itúrum կամ Mon itúram esse Ազդելոց գոլ.
Ընդունելութիւն ներկայ, Mon ens, monéntis Ազդող. ազդելով.
Ընդունելութիւն ապառնի, Mon itúrus, ra, rum Ազդելոց.
Դերբայ ա. Món itum Առ ազդել.
Դերբայ բ. Mon éndi Ազդելոյ. Monéndo Ազդելով. Mon éndum Առ՚ի յազդել։

Ըստ երկրորդի լծորդութեան խոնարհին և սոքա.

Dóceo,	doces,	dócui,	doctum	Ուսուցանեմ.
Táceo,	taces	tácui,	tácitum	Լռեմ.
I'mpleo,	imples,	implévi,	implétum	Լնում.
Spóndeo,	spondes,	spopóndi,	sponsum	Խոստանամ.
Hábeo,	habes,	hábui,	hábitum	Ունիմ.
Sédeo,	sedes,	sedi,	sessum	Նստիմ, եմ։

ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

Ներկայ.

Leg o	ընթեռնում.	Lég imus	ընթեռնումք.
Leg is	ընթեռնուս.	Lég itis	ընթեռնուք.
Leg it	ընթեռնու.	Leg unt	ընթեռնուն:

Անկատար.

Leg ébam	ընթեռնուի.	Leg ebámus	ընթեռնուաք.
Leg ébas	ընթեռնուիր.	Leg ebátis	ընթեռնուիք.
Leg ébat	ընթեռնոյր.	Leg ébant	ընթեռնուին:

Կատարեալ.

Leg i	ընթերցայ.	Lég imus	ընթերցաք.
Leg ísti	ընթերցար.	Leg ístis	ընթերցայք.
Leg it	ընթերցաւ.	Leg érunt կամ Leg ére	ընթերցան:

Գերակատար·

Lég eram	ընթերցեալ էի·	Leg erámus	ընթերցեալ էաք·
Lég eras	ընթերցեալ էիր·	Leg erátis	ընթերցեալ էիք·
Lég erat	ընթերցեալ էր·	Lég erant	ընթերցեալ էին։

Ապառնի·

Leg am	ընթերցայց·	Leg émus	ընթերցցուք·
Leg es	ընթերցցես·	Leg étis	ընթերցջիք·
Leg et	ընթերցցի·	Leg ent	ընթերցցին։

Կատարեալն Ապառնի·

Lég ero	ընթեռնուի·	Leg érimus	ընթեռնուաք·
Lég eris	ընթեռնուիր·	Leg éritis	ընթեռնուիք·
Lég erit	ընթեռնոյր·	Lég erint	ընթեռնուին։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

		Leg ámus	ընթերցցուք·
Leg e կամ Lég ito	ընթերցիր·	Lég ite կամ Leg itóte	ընթերցջիք·
Lég ito	ընթերցցի·	Leg únto	ընթերցցին։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Ներկայ·

Leg am	ընթեռնուցում·	Leg ámus	ընթեռնուցումք·
Leg as	ընթեռնուցուս·	Leg átis	ընթեռնուցուք·
Leg at	ընթեռնուցու·	Leg ant	ընթեռնուցուն։

Անկատար·

Lég erem	ընթեռնուի·	Leg erémus	ընթեռնուաք·
Lég eres	ընթեռնուիր·	Leg erétis	ընթեռնուիք·
Lég eret	ընթեռնոյր·	Lég erent	ընթեռնուին։

Կատարեալ·

Lég erim	ընթերցեալ իցեմ·	Leg érimus	ընթերցեալ իցեմք·
Lég eris	ընթերցեալ իցես·	Leg éritis	ընթերցեալ իցէք·
Lég erit	ընթերցեալ իցէ·	Lég erint	ընթերցեալ իցեն։

Գերակատար·

Leg íssem	ընթերցեալ էի·	Leg issémus	ընթերցեալ էաք·
Leg ísses	ընթերցեալ էիր·	Leg issétis	ընթերցեալ էիք·
Leg ísset	ընթերցեալ էր·	Leg íssent	ընթերցեալ էին։

ԱՆԵՐԵՒՈՅԹ

Ներկայ, Légere ընթեռնուլ. Անցեալ, Leg ísse ընթերցեալ գոլ.
Ապառնի, Lectúrum կամ Lectúram esse ընթեռնլոց գոլ.
Ընդունելութիւն ներկայ, Leg ens, legéntis ընթերցող. ընթեռնլով.
Ընդունելութիւն ապառնի, Lectúrus, ra, rum ընթեռնլոց.
Դերբայ ա. Lectum Առ ընթեռնուլ.
Դերբայ բ. Leg éndi ընթեռնլոյ. Leg éndo ընթեռնլով. Leg éndum Առ ընթեռնուլ:

Ըստ երրորդի լծորդութեանս խոնարհին և առաջիկայքդ.

Concédo,	concédis,	concéssi,	concéssum	Շնորհեմ.
Promítto,	promíttis,	promísi,	promíssum	Խոստանամ.
Éxigo,	éxigis,	exégi,	exáctum	Պահանջեմ.
Erípio,	erípis,	erípui,	erépium	Խլեմ.
Vendo,	vendis,	véndidi,	vénditum	Վաճառեմ.
Solvo,	solvis,	solvi,	solútum	Լուծանեմ.
Reddo,	reddis,	réddidi,	rédditum	Հատուցանեմ.

Cápio,	capis,	cepi,	captum	Ըմբռնեմ.
Cingo,	cingis,	cinxi,	cinctum	Պատեմ.
Զ̅. Ածականք որ զներգործական բայի ունին զօրութիւն, խնդրեն զհայցական. գր

Populabúndus *agros.* Աւարող կամ աւարելով կամ յաւարել զանդաստանս ։

Է̅. Ածականք որ խնդրեն զաննախդիր բացառական կամ զգործիական, են,

Praéditus *virtúte.* Ճոխացեալ առաքինութեամբ, առաքինի ։

Dignus *láude.* Արժանի գովութեան. արժանաւոր, գովելի ։

Indígnus *honóre*. Անարժան պատուոյ։
Conténtus *sua sorte*. Գոհ ընդ վիճակ իւր ։

Բայց dignus առնու և սեռական, և աներևոյթ ևս ․ որ
Dignus *túae virtútis*. Արժանի քոյին առաքինութեան ։
Dignus *amári*. Արժանի սիրոյ ։

Է ․ Են և ածականք ինչ որ խնդրեն զգերբայ ․ որ
Mirábilis *visu*. Զարմանալի ՚ի տեսանել․ տեսութեան արժանի ։
Fácilis *dictu*. Դիւրին յասել․ զոր դիւրին է ասել ։
Invéntu diffícilis. Դժուարին ՚ի գտանել․ դժուարագիւտ ։

Յորժամ բայն չունիցի զգերբայ, յայլ ձև փոխի կաղմութիւնն ․ որ
Difficile est *studére* lectióni méae. Դժուարին է ուսանել զիմ դաս ։

Ը ․ Բաղդատական ածականք խնդրեն զանուանխնդիր բացառական ․ որ
Dóctior *Petro* (որ prae Petro). Գիտնագոյն քան զՊետրոս ։
Virtus est pretiósior *áuro* (որ prae áuro). Առաքինութիւնն պատուականագոյն է քան զոսկի ։

Մերթ ևս խնդիրն յուղղական հոլով դնի հանդերձ մակբայիւս quam ; որ
Páulus est dóctior *quam* Petrus. Պօղոս գիտնագոյն է ․քան զՊետրոս ։

Կամ այլազգ ևս ․
Dóctior est *quam* putas. Գիտնագոյն է քան զոր կարծես ։
Nihil túrpius est *quam* mentíri. Չիք ինչ առաւել ամօթալի քան զստելն, կամ որպէս սուտ խօսել ։

Թ ․ Գերադրական ածականք խնդրեն զսեռական, կամ բացառական, և կամ ներգոյական ․ որ

Altíssima *árborum* կամ ex *arbóribus* կամ inter *árbores*. Բարձրագոյնն ծառոց, կամ 'ի ծառոց, կամ 'ի ծառս:

Եթէ խնդիր գերադրականին՚ եզական անուն իցէ, գերադրականն սեռիւ ոչ համաձայնի ընդ նմա, այլ առնու զնա 'ի սեռական հոլով. գ̄ր

Ditíssimus *urbis*. Ամենահարուստն 'ի քաղաքին:

Յորժամ բանն զերկուց իրաց իցէ, փոխանակ գերադրականի վարի բաղդատականն. գ̄ր

Valídior mánuum. Զօրագոյնն յերկոսին ձեռս:

ծ̄ա. Մասնական անուանք, որպէս unus մի, quis ո՞վ, ո՛ք, áliquis ոք, nemo ոչ ոք ե̃ն, առնուն զխնդիր ըստ օրինակի գերադրականաց. գ̄ր

Unus *mílitum* կամ ex *milítibus* կամ inter *mílites*. Մին 'ի զինուորաց:

Quis *vestrum* կամ ex *vobis* կամ inter *vos*? Ո՞ 'ի ձէնջ:

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ԲԱՅԻՑ

ա̄. Ներգործական բայք առնուն խնդիր սեռի 'ի հայցական հոլով. գ̄ր

Amo *Deum*. Սիրեմ զԱստուած:

Doces *púeros*. Ուսուցանես զմանկունս:

Սոյնպէս և բազում կրաւորակերպ չէզոքք. գ̄ր

I'mitor *patrem*. Նմանող լինիմ հօր:

Mirámur *virtútem*. Զարմանամք ընդ առաքինութիւն:

Եւս և բայքս júvat օգնէ, deléctat բերկրեցուցանէ, manet մնայ, decet վայելէ. fugit, fallit, praéterit (յորժամ նշա-

նակէն) զանխլանալ կմ անգիտանալ. Օր.
Música *me* juvat կամ deléctat. Երաժշտութիւնն զուարճացուցանէ զիս:
Glória aetérna *nos* manet. Փառք յաւիտենական մնայ մեզ:

A'liquem exspectáre. Սպասել ումեք:
Multa *nos* fúgiunt, fallunt, praetéreunt. Բազում ինչ զանխուլ մնայ առ 'ի մէնջ:

Է. Տրականախնդիրք են

1. Չեզոք բայք մեծաւ մասամբ. Օր.
Stúdeo *grammáticae*. Ուսանիմ զքերականութիւն:

Satisfécit *praeceptóri*. Հաճեաց զվարժապետն:

2. Բայք բաղադրեալք յէականէն sum եմ. (բաց 'ի բայէն absum 'ի բացեայ եմ, որ խնդրէ զբացառական.) Օր.
Défuit *offício*. Յետնեալ գտաւ 'ի կարևոր պաշտամանէն:

Áderat *huic spectáculo*. Մերձ կայր յայս տեսարան:

3. Բայքս imminére, impéndere, instáre մօտալուտ լինել, սպառնալ. Օր.
Magna calámitas *tibi* imminet, impéndet, instat. Թշուառութիւն մեծ կայ մնայ քեզ 'ի մօտոյ:

4. Բայքս áccidit, évenit, contíngit պատահէ, դէպ լինի. condúcit, expédit օգուտ է, լաւ է. placet հաճոյ է, ևն. Օր.
Id *mihi* áccidit. Դիպաւ ինձ այդ:
Hoc *tibi* expédit. Այդ լաւ է քեզ.

5. Կրաւորակերպ չէզոք բայքս irásci բարկանալ, blandíri շողոմել. opitulári օգնել, minári սպառնալ, ևն. Օր.
Homo iráscitur *mihi*. Այրս այս բարկանայ ընդ իս:
Minátur *mihi*. Սպառնայ ինձ:

6. Էական բայս sum, յորժամ դնի փոխանակ Ունելոյ. Օր.

Est *mihi* liber. Է իմ մատեան ինչ ։

Իսկ յորժամ վարի որպէս բերել 'ի վերայ ; առնու կրկին տրականս • զր

Hoc erit *tibi dolóri*. Եղիցի քեզ այդ 'ի ցաւս ։

Զնոյն իմա և վասն բայիցս do տամ, tríbuo ընծայեմ, verto շրջեմ, համարիմ • զր

Crímini dedit *mihi* meam fidem. Յանցանս համարեցաւ ինձ զհաւատարմութիւն իմ։

Vítio vértere áliquid *alícui*. Համարել ինչ ումեք 'ի դարովանս ։

Գ • Բացառական խնդրեն աննախդիր

1• Չեզոք բայք նշանակիչք առատութեան կամ պակասութեան • զր

Abúndat *divítiis*. Լի է ճոխութեամբ ։

Nulla re caret. Ոչինչ իւիք կարօտանայ • պակասէ նմա և ոչինչ ։

Gaudére *felicitáte aliéna*. Խնդալ ընդ բարեբաստութիւն օտարին ։

2. Կրաւորականքս չեզոք բայքս, և բաղադրեալքն 'ի նոցանէ •

Frúor *ótio*. Վայելեմ 'ի հանգստեան • անզբաղ կամ ։

Fungor *offício*. Վարեմ զպաշտօն ։

Pótior *urbe*. Տիրեմ քաղաքին ։

Vescor *pane*. Կերակրիմ հացիւ ։

Utor *libris*. Ի վար արկանեմ զգիրս ։

Deléctor *hac re*. Խնդամ ընդ այս ինչ ։

Gloriári *aliénis bonis*. Պարծել օտարին բարեօք ։

Դ • Սեռականախնդիրք են բայքս miseréri ողորմել, oblivísci մոռանալ, recordári, meminísse յիշել • զր

Miserére *páuperum*. Ողորմեա աղքատաց։

Vivórum mémini, nec possum oblivísci *mortuórum*. Զկենդանիս յիշեմ, և ոչ կարեմ մոռանալ զմեռեալսն ։

Է. Խնդիր բնութեան բայից՝ որ նշանակիցեն տալ, ասել, խոստանալ են, լինի տրական. զր

Do vestem *páuperi*. Տամ զհանդերձ աղքատի:

Deus vitam aetérnam *justo* promíttit. Աստուած զկեանս յաւիտենականս խոստանայ արդարոյն:

Նոյնպէս ասի.

Minári mortem *alícui*. Սպառնալ ումեք զմահ:

Gratulári victóriam *alícui*. Խնդակից լինել ումեք ընդ յաղթութիւն:

Ը. Բայք նշանակիչք շարժման, յորդորանաց են, առնուն խնդիր բը-նութեան 'ի նախդրիւ տրականն. զր

Haec via ducit *ad virtútem*. Այս ճանապարհ տանի յառաքինութիւն:

Te hortor *ad labórem*. Յորդորեմ զքեզ յաշխատութիւն:

Այլ երեքին բայքս scribo գրեմ, mitto առաքեմ, fero բերեմ, առնուն խնդիր բնութեան 'ի նախդրիւ կամ յաննախադիր տրական. զր

Scribo *ad te* կամ *tibi* epístolam. Գրեմ առ քեզ թուղթ:

Թ. Բայքս docére ուսուցանել, rogáre աղաչել, celáre ծածկել, առնուն կրկին հայցականս. զր

Dóceo púeros *grammáticam*. Ուսուցանեմ մանկանց զքերականութիւն:

Ժ. Բայք առնլոյ, յուսալոյ, ստանալոյ, են, առնուն խնդիր բնութեան 'ի բացառականն. զր

Accépi líteras *a patre meo*. Ընկալայ թուղթ 'ի հօրէն իմմէ:

Petívit beneficium *a rege*. Խնդրեաց շնորհս յարքայէ:

Եթէ խնդիր բնութեան պայմանի

բայից եղէ անկենդան ինչ, դնի բացառական՝ e կամ ex նախդրիւ. զր
Accépi magnam voluptátem *ex tuis líteris*. Բազում բերկրութիւն ընկալայ 'ի թղթոյ քումմէ ։
Haurire áquam *ex fonte*. Հանել զջուր յաղբերէ ։

Այլ բայքս audíre լսել, quaérere հարցանել, առնուն զբացառական՝ նախդրօքս a, ab կամ e, ex ; զր
Id audívi *ex* կամ *ab amico meo*. Լուայ զայդ 'ի բարեկամէն իմմէ ։

Բայց cognóscere ճանաչել, միշտ խնդրէ զնախդիրս e, ex ; զր
Ex líteris tuis cognóvi. Ի թղթոյ քումմէ ծանեայ ։

Ը. Բայք նշանակիչք ազատելոյ, բառնալոյ ևն, առնուն խնդիր բնութ. 'ի բացառականն a կամ ex նախդրօք, մերթ և առանց նախդրաց ։
Exímere áliquem *a* կամ *ex servitúte* կամ լոկ *servitúte*. Ազատել զոք 'ի ծառայութենէ ։

Թ. Բայք նշանակիչք առատութեան կամ պակասութեան առնուն խնդիր բնութ. զաննախդիր բացառական. զր
Implére dólium *vino*. Լնուլ զտակառն գինւով ։
Nudáre áliquem *praesidio*. Կապտել զոք յօգնութենէ ։

Ժ. Բայք նշանակիչք ազդելոյ, զգուշացուցանելոյ, առնուն խնդիր բնութեան 'ի սեռականն, կամ 'ի բացառական de նախդրիւ. զր
Admónui eum *perículi* կամ *de perículo*. Զգուշացուցի նմա զվտանգն ։
U'tinam factus essem *tui consilii* cértior! Ո՜ տայր ինձ իրազեկ լինել խորհրդոյ քոյ ։

Բայս móneo ազդ առնեմ, առնու

խնդիր և զչէզոք հայցականս hoc, id, illud, unum; օր̃ *Hoc eos* móneo. Զայս ազդ առնեմ նոցա ։

ԾԵ. Բայք նշանակիչք ամբաստանելոյ, դատապարտելոյ, արձակելոյ, յանդիմանելոյ, առնուն խնդիր բնութեան 'ի սեռականն, և մերթ յան-նախնդիր բացառական. օր̃

Insimuláre áliquem *furti* կամ *furto*. Ցանցանս 'ի վերայ դնել գողութեան ։

Absólvere áliquem *críminis* կամ *crímine*. Արձակել զոք 'ի փաստապարտութենէ ։

ԾԶ. Կրաւորական բայք առնուն խնդիր բացառական a, և ab նախդրօք՝ յորժամ խնդիրն է անձնաւոր. օր̃

Amor *a Deo*. Սիրիմ յԱստուծոյ ։

Իսկ յորժամ խնդիրն է անկենդան ինչ, դնի աննախդիր բացառական. օր̃

Moeróre confícior. Զգածիմ տրտմութեամբ ։

Սակայն բայքս probor ընդունելի գտանիմ, impróbor անհաճոյ գտանիմ, vídeor երևիմ, և ընդունելութիւնք եղերեալք 'ի dus, da, dum առնուն խնդիր մանաւանդ 'ի տրականն քան 'ի բացառականն. օր̃

Haec senténtia néque *nobis*, néque *illi* probátur. Այդ կարծիք ոչ մեզ հաւանելի է, և ոչ նմա ։

Mihi colénda est virtus. Պարտ է ինձ գործել զառաքինութիւն ։

ԾԷ. Բայքս pértinet անկ է, áttinet պատշաճի, spectat հայի ին, առնուն խնդիր զանձնաւորս 'ի նախդրիւ տրական. օր̃

Hoc *ad me* pértinet կամ spectat. Այդ ինձ անկ է ։

ԾԸ. Դժկամազուրկքս poénitet զղջէ,

pudet ամօթ է, piget տաղտուկ է, taedet ձանձրալի է, míseret ողորմելի է, զանունն կամ զդերանունն որ յառաջ քան զինքեանս կայ՝ հայցական խնդրեն, և զհետագայն սեռական. ո̃ր

Me poénitet *cúlpae meae.* Ցաւէ ինձ ընդ յանցանս իմ:

Regem míseret *hóminis.* Գթացաւ արքայն յայրն:

Յառաջոյ դիմազուրկ բայից poénitet, pudet են, ամենայն բայք կարեն լինել դիմազուրկ, ո̃ր դնիլ յերրորդ դէմս եզակի. բաց 'ի բայից volo, nolo, malo, áudio, cúpio; ո̃ր

I'ncipit me poenítere cúlpae meae. Սկսայ զղջալ ընդ յանցանս իմ:

Debet te púdere tuae negligéntiae. Պարտ է ամաչել քեզ ընդ պղերգութիւն քո:

ԺԶ. Բայքս refert և ínterest փոյթ է, խնդրեն սեռական. ո̃ր

Refert կամ ínterest *regis* (ո̃ր cáusâ regis). Փոյթ է նմա վասն (կամ 'ի պատճառս) թագաւորին:

Զստացական դերանուանս բայս refert խնդրէ յիգական սեռի եզակի ուղղական. ո̃ր

Refert *mea, tua, sua, nostra, vestra.* Փոյթ է կամ լաւէ ինձ, քեզ, նմա, մեզ, ձեզ:

Իսկ ínterest խնդրէ զնոյնն 'ի չէզոք սեռի յոգնակի հայցական. ո̃ր

Etiámsi *sua* nihil íntersit. Թէպէտ և իւրեան չէ ինչ փոյթ:

Յորժամ խնդիր բայից refert և ínterest անկենդան ինչ իցէ, դնի նախդրիւ տրական. ո̃ր

Ad honórem nostrum ínterest. Փոյթ է կամ օգտէ պատուոյ մերում:

ԺԷ. Էական բայս est վարեալ որպէս

դիմաղուրկ՝ խնդրէ զսեռական․ և զըստացականն 'ի չէզոք սեռի եղանակի ուղղական․ զր

Est *regis* tuéri súbditos. Թագաւորին է պաշտպանել հպատակաց ։

Meum est lóqui. Ինձ անկ է խօսել ։

Magíster credit *suum* esse. Վարժապետն ինքեան 'ի դէպ կամ սեպհական համարի ։

Յայսոսիկ զօրութեամբ իմա զբառս negótium.

ԾԸ․ Դիմաղուրկ բայս opus est պիտոյ է, զանունն կամ զդերանունն յառաջեալ քան զինքն՝ խնդրէ տրական, և զհետադասն աննախդիր բացառական․ զր

Mihi opus est *amico.* Ինձ պէտք են բարեկամի ։

ԾԹ․ Բայս intérdico արգելում, առնու խնդիր զանձն 'ի տրական հոլով, և զիրն 'ի բացառական․ զր

Intérdico *tibi domo mea.* Արգելում զքեզ 'ի տանէ իմմէ ։

Կ․ Ի կալ երկուց բայից 'ի միասին՝ եթէ առաջինն ոչ նշանակէ զշարժումըն, երկրորդն դնի աներևոյթ․ զր

Amat *lúdere.* Սիրէ խաղալ ։

Եթէ առաջին բայն նշանակիցէ զշարժումն գնալոյ կամ գալոյ ուրեք, երկրորդն դնի դերբայ յանգեալ 'ի um; կամ եթէ բայն չունիցի զայսպիսի դերբայ, փոխի դերբայն յանգեալ 'ի dum հանդերձ ad նախադրութբ․ զր

Eo *lusum.* Գնամ 'ի խաղալ ։

Vénio *ad studéndum.* Գամ յուսանել ։

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆՑ

ա. Ընդունելութիւնք զնոյն խնդիրս առնուն՝ զորս և բայքն իւրեանց . զր Cícero *oratiónes* habitúrus. Կիկերոն հանդերձեալ ատենաբանել ։ Gallus *escam* quaérens, *margarítam* réperit. Աքաղաղ յորոնելն զկեր, եգիտ զմարգարիտ ։

բ. Անցեալ ընդունելութիւնն բացում անգամ յաննախնդիր բացառական հոլով համաձայնի ընդ խնդրոյ իւրում, և կազմէ իմաստ ինչ ժամանակական ազատ յայլ իմաստից բանին . զր *Pártibus factis*, sic locútus est leo. Յետ զբաժինսն առնելոյ, այսպէս խօսեցաւ առիւծն ։ *Scriptâ* jam *epístolâ*, venit puer tuus. Այն ինչ գրեալ էր նամակն, եկն մանուկ քո ։

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Խնդիրք այլևայլ նախադրութեանց եդան յառաջնում մասին . աստանօր դիցուք զկանոնս տեղական անուանց, յորոց առաջի բազում անգամ նախադրութիւնքն զօրութեամբ գտանին, և երբեմն յայտնապէս ։

Արդ գլխաւորքն յանուանս տեղւոյ՝ են պատասխանիք հարցմանցս ubi? ուր,

յորո՞ւմ տեղւոջ. quo? յո՞. unde? ուս֊տի՞. quâ? ընդ ո՞ր։

Ա̄. Ի պատասխանի հարցմանս ո՞ւր, անուն տեղւոյն դնի բացառական in նախադրութեամբ. զ̃ր

Sum *in Gállia*. Եմ 'ի Գաղղիա։

Ámbulat *in horto*. Շրջի 'ի պար֊տիզի։

Առաջի յատուկ անուանց քաղաքաց, ամրոցաց և գիւղից նախադրութիւնն զօրութեամբ դնի. զ̃ր

Natus est *Athénis*. Ծնաւ յԱթէնս։

Այլ յատուկ անուանց քաղաքաց և գիւղից որ ընդ առաջնով և ընդ երկրորդ հոլովմամբ անկանիցին և ունիցին զե֊զական, դնին 'ի սեռական հոլով. զ̃ր

Hábitat *Rómae* (զ̃ր in urbe Romae). Բնակէ 'ի Հռովմ։

Այսպէս 'ի սեռական հոլով դնին և բառքս domus, humus; զ̃ր

Est-ne *domi*? Ի տա՞ն իցէ։

Humi nascéntia fraga. Գետնածին ելակք։

Սոյնպէս ասի և *militiae*, *belli*, 'ի զի֊նուորութեան, 'ի պատերազմի. զ̃ր *in témpore* milítiae, *in témpore* belli.

Բ̄. Ի պատասխանի հարցմանս յո՞, անուանք տեղւոյ դնին հայցական՝ in նախադրութեամբ, որ նոյնպէս առա֊ջի անուանց քաղաքաց և գիւղից զօրու֊թեամբ կայ. զ̃ր

Eo *in urbem*. Գնամ 'ի քաղաքն։

Ibo *Lutétiam*. Երթայց 'ի Լուտետիա, 'ի Փարիզ։

Eo *domum* կամ *rus*. Գնամ 'ի տուն, կամ 'ի գիւղ։

Գ̄. Ի պատասխանի հարցմանս ուստի՞, անուանք տեղւոյ դնին 'ի բացառական հոլով՝ հանդերձ e կամ ex նախադրու֊թեամբք, որ առաջի անուանց քաղա֊

քայց և գիւղից, և բառիցս domus և rus լուեն. զի

Egréssus est e cubículo. Ել 'ի սենեկէն ։

Rédeo Roma. Դառնամ 'ի Հռովմէ ։

Vénio rure, domo. Գամ 'ի գեղջէ, 'ի տանէ ։

Զ. Ի պատասխանի հարցմանն՝ ընդ որ, անուն տեղւոյն դնի հայցական per նախադրութեամբ. զի

Iter feci per Gálliam, per Romam. Ճանապարհ արարի ընդ Գաղղիա, ընդ Հռովմ ։

Է. Նախադրութիւնք յօդեալք ընդ բայս կարեն առնուլ զնոյն խնդիր զոր առնուին առանձինն. այլ սակս պարզութեան կամ վսեմութեան կրկնին ևս 'ի վերայ անուանցն. զի

Eum, *nos* qui aetáte *ánteit*, támquam superiórem cólere debémus. Զնա՝ որ յառաջէքան զմեզ հասակաւ, իբրև վերագոյն յարգել պարտիմք ։

Qui omnes insídias timet, *in* nullas incidit. Որ յամենայն դարանակալութեանց երկնչի, և ոչ 'ի մի անկանի ։

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ՄԱԿԲԱՅԻՑ՝ ԻԲՐՈՒ ԱԾԱԿԱՆ

ԿԱՄ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼՈՑ

Քանակական մակբայք խնդրեն սեռական. զի

Parum *vini*. Սակաւ գինի ։

Multum *áquae*. Բազում ջուր ։

Plus *vírium*. Բազում զօրութիւն ։

Minus *virtútis*. Նուազ առաքինութիւն ։

Satis *verbórum*. Բազում բանք ։

Nimis *insidiárum*. Շատ կամ սաստիկ դարանք ։

Նոյնպէս և ժամանակականք և տեղականք ․ օր՟

Prídie *Calendárum* կամ *Caléndas*. (օր՟ ante caléndas.) Աւուրբ յառաջ քան զկաղանդս ։

Ubi *terrárum*? Յո՞ր կողմն աշխարհի ։

Núsquam *géntium*. Ոչ ուրեք երբեք յաղինս ։

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ՇԱՂԿԱՊԻՑ

Ա․ Շաղկապս quum եթէ նշանակիցէ՝ յորժամ, խնդրէ զբայն ՚ի սահմանական եղանակի ․ օր՟

Quum Athénae *flórerent*. Յորժամ ծաղկէին Աթէնք ։

Իսկ եթէ նշանակիցէ որովհետև, քանզի, խնդրէ զբայն յանկատար ժամանակի ստորադասականին ․ օր՟

Quum id *velis*. Որովհետև զայդ կամիս ։

Բ․ Շաղկապս dum ՚ի նշանակելն՝ ուր ,․ մինչ, խնդրէ ստորադասական անկատար ․ օր՟

Dum canis *ferret* carnem. Մինչ շունն տանէր զմիս ։

Իսկ եթէ նշանակիցէ՝ ցորչափ, մինչև, խնդրէ ստորադասականներկայ ․ օր՟

Clitéllas dum *portem* meas. Ցորչափ տարայց զհամետս իմ ։

Գ․ Շաղկապս si եթէ, թէ, խնդրէ զանկատար և զգերակատար ստորադասականին ․ օր՟

Id si *fáceres* կամ *fecisses* causâ meâ. Զայդ եթէ առնէիր կամ արարեալ էիր յաղագս իմ ։

Է. Շաղկապս ut զի, որպէս զի, խնդրէ ստորադասական. զ՟ր
Luce ut *quiéscam.* Իտուէ զի հանգեայց:
Ut որպէս, խնդրէ զսահմանական.
Ut ájunt. Որպէս ասեն:

Ut յորժամ, իբրև, այն ինչ, խնդրէ զսահմանական. զ՟ր
Ut ab urbe *discéssi.* Իբրև մեկնեցայ 'ի քաղաքէն:

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ՄԻՋԱՐԿՈՒԹԵԱՆՑ

Միջարկութիւնք սովորաբար առանձին կան. այլ երբեմն զօրութեամբ բայի իւիք առնուն ոմանք հայցական, կամ սեռական. զ՟ր
Ecce *illum* (vídeo)! Ահա՛ նա:
Hem! *astútias* (vide). Տե՛ս զխորամանկութիւնն:

Այսպիսիք են և ah! vah! o! heu.!
Proh առնու և սեռական:
Hei և Vae միշտ տրական. զ՟ր
Vae victis! Վա՜յ պարտելոց:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՒՔ

Գլխաւորքն 'ի քերականական ձևս են Զեղչումն, Բակառութիւն, և Հելլենաբանութիւն ։

Ա. Զեղչումն է, որով դիւրիմաց ինչ մասն բանի չդնի յայտնապէս . զր
Ego si Tiro ad me ... cogito ... in Tusculánum. Ես՝ եթէ Տիրոն (կամ համբակն, մանուկն) առ իս (գայցէ), խորհիմ 'ի Տուսկուլոն (երթալ)։

Բ. Բակառութիւն է, յորում կարգ շարագրածին ըստ իմաստից բանին դնի, և ոչ ըստ բառիցն եղելոց . զր
Pars in cárcerem *acti*, *pars* béstiis *abjécti*. Ոմանք 'ի բանտ արկեալք, ոմանք գազանաց ընկեցեալք ։ Ուր ըստ կարգի բառիցն հարկ էր դնել acta, objecta.

Գ. Հելլենաբանութիւնք յաճախեալք առ Լատինս՝ են

1. Փոխադրութիւն հոլովոյ յանուանս . զր
Istum quem quaéris, ego sum (փոխանակ iste). Զոր խնդրեսն՝ ես եմ ։
Lícuit *otióso* esse Themístocli (փոխանակ otiósum). Շնորհեցաւ կամ դէպ եղև անգործ կալ Թեմիստոկլի ։

2. Սեռական խնդիր փոխանակ բացառականի . զր
Laetor *malórum* (փոխանակ de malis). Խնդամ ընդ չարիս ։
Abstinéto *irárum* (փոխանակ ab iris). Ժուժեա՛ 'ի ցասմանէ ։

3. Յատկացուցիչ առանց յատկացելոյ . զր

Sophia *Septímii* (ո͞ր filia Septímii). Սոփիա (դուստր) Սեպտիմիոսի ։

4. Հայցական խնդիր միում 'ի նախադրութեանցս circa, quóad, secúndum զօրութեամբ եղելոց ․ ո͞ր

De iis rebus, *quas* volo collóqui tecum. Զիրաց, զորոց կամիմ խօսել ընդ քեզ ։

5. Չէզոք ածական՝ խնդրով ․ ո͞ր

Áliquid mali (փոխանակ áliquid malum). Չար ինչ ։

Opáca viárum (փոխանակ víae opácae). Հովանաւորք ճանապարհաց ։

6. Ածական չէզոք մնացեալ, անհամաձայն ընդ արականի կամ իգականի ․ ո͞ր

Triste lupus stábulis (փոխանակ tristis). Տխուր գայլ 'ի բայոցի ։

7. Չէզոք ածական փոխանակ մակբայի ․ ո͞ր

Dulce ridet (փոխանակ dúlciter). Քաղցր ծիծաղի ։

8. Աներեւոյթ փոխանակ դերբայի ․ ո͞ր

Amor casus *cognóscere* nostros (փոխանակ cognoscéndi). Սէր ճանաչելոյ զդէպս մեր ։

ԿԱՆՈՆՔ

ԼԱՏԻՆ ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ

ՔԱՆԱԿ

Քանակն է չափ վանկից․ և վանկիցս ոմանք երկարք են, ոմանք սուղ, և այլք երկար կամ սուղ․ վասն որոյ և կոչին հասարակք:

Երկար վանկն նշանակի այսու գծիւս –, vīrtūtēs.

Սուղ վանկն նշանակի այսպէս ˘, Dŏmĭnŭs.

Հասարակն յարձակ բանս սուղ հնչի․ իսկ 'ի քերթութեան մերթ երկար և մերթ սուղ․ զր teněbrae.

ՁԱՅՆԱՒՈՐՔ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ

Ա. Ամենայն վանկ բաղկացեալ յերկուց ձայնաւորաց հեռաշնեալ եղելոց կամ միաւորելոց՝ երկար է․ զր laūs, eīa, eūge, paēnaē. Բայց praē 'ի բաղադրութեան եթէ գոյցի յառաջ քան զայլ ձայնաւոր, սղի․ զր praěest.

Բ. Ի միում բառի կրկին ձայնաւորք յորժամ երկուս վանկս կազմիցեն, առաջինն սուղ է. զ̃ր Dĕus, pŭer.

Զարտուղութիւն ա̃. A երկար է 'ի յատուկ անուանս յանգեալս āius; 'ի բառս āer և յայլ բառս ինչ յունականս, զ̃ր Lycāon ևն:

Բ̃. E երկար է 'ի բառս ēheu, 'ի յատուկ անուանս յանգեալս ēius, 'ի յունական բառս ինչ, զ̃ր AEnēas ևն. և 'ի միջի երկուց i տառից 'ի բառս հինգերորդի հոլովման. զ̃ր diēi.

Գ̃. I հասարակ է 'ի Diana, և 'ի սեռականս յանգեալս ius որպէս unius, սուղ յ alterĭus; երկար 'ի սեռականն alīus, և յայն ժամանակս fio բային՝ յորս չմտանէ r, զ̃ր fīent, և 'ի բառս ինչ յունականս և եբրայեցիս, զ̃ր Amphīon, Marīa.

Դ̃. O հասարակ է 'ի բառս ohe; երկար 'ի յունականս Trōes, herōs, herōis.

Է̃. U զկնի տառիցս q և g ոչինչ զօրէ, բայց 'ի բառէս argŭo; ընդ մէջ s տառիս և այլում ձայնաւորի՝ կազմէ զվանկ որպէս 'ի sŭere, sŭis (յուղղ. sus), sŭus.

Գ. Ըստ դրից՝ ձայնաւոր ինչ որ յառաջիցէ քան զկրկնակ տառս j, x, z, կամ քան զերկուս բաղաձայնս, երկար է. զ̃ր mājor, ēxul, gāza, dūlcis; հասարակ է յորժամ երկրորդն ևեթ 'ի բաղաձայնից անտի նայ է, զ̃ր l կամ r, միայն թէ 'ի բնէ սուղ իցէ ձայնաւորն, և երկոքին բաղաձայնքն ևս 'ի նմին վանկի գտանիցին, որպէս 'ի păter, patris.

Զարտ. A երկար է 'ի mātris, զի երկարի և 'ի māter; o երկար է յ ōbruere, զի երկոքին բաղաձայնքն ոչ 'ի նմին վանկի գտանին, ob-ruere.

Դ. Ամենայն վանկ կրճատեալ երկար է. զ̃ր cōgo փոխանակ cŏăgo, dī փոխանակ dīī.

ՁԱՅՆԱՒՈՐՔ Ի ՅԱՆԳՍ ԲԱՌԻՑ ԵՒ ՅԱՒԵԼԻ ՎԱՆԿՍ

A յանգ երկար է 'ի կոչական հոլովս յունական անուանց յանգելոց 'ի as, զոր AEneas, AEneā ; 'ի լատին բացառականս և 'ի հրամայականս . populeā, sub umbrā, amā ; 'ի նախադրութիւնս, 'ի մակբայս , 'ի շաղկապս և 'ի միջարկութիւնս . ergā, frustrā, praetereā. Զարտուղին eiā, itā, putā և quiā.

Համառակ է 'ի թուական ածականս որ յանգին ginta, զոր triginta.

Սուղ այլ ամենայն ուրեք. rosă, pulchră, templă, sanctă, poëmă.

A աւելի վանկի 1 սուղ է 'ի բայն do և յածանցեալս նորին. dăbāmus, circumdăbāmus.

Յանուանս՝ որոց ուղղականն յանգի ma, և սեռ. mătis, և as-ădis և ăris, և 'ի յատուկս որ յանգին al-ălis և ar-ăris, որպէս poëma, poëmătis ; vas, vădis ; mas, măris ; Annibal, Annibălis ; Caesar, Caesăris.

Եւ 'ի բառս anas, anătis ; bacchar, bacchăris ; daps, dăpis ; fax, făcis ;

1 Աւելի վանկ կոչի յաւելուած թուոյ վանկից բառն երեք հոլովման կամ լծորդութեամբ. եւ աւելի վանկ համարի ոչ վերջին վանկն այլ վերջընթերն եւ որ յառաջէ քան զնա. զոր օրինակ virtus, virtútis, virtutibus ; amas, amamus, amabamus, amabimini.

hepar, hepătis; jubar, jubăris; nectar, nectăris; trabs, trăbis; par, păris և յածանցս սորին․ abax, abăcis; climax, climăcis, և 'ի յունական բառս ինչ ։

Երկար է այլ ամենայն աւելի վանկս․ pācis, rosārum, amābāmus, reddāmus.

E յանգ երկար է յառաջնում և 'ի հինգերորդ հոլովման․ musicē, diē; 'ի բառս famē, և յեզակին հրամայականի յերկրորդ լծորդութեան․ monē, docē. Ի մակբայս ածանցեալս յածականաց հոլովելոց ըստ երկրորդի հոլովման․ doctē, dignē; և 'ի բառքս fermē, ohē, mē, tē, sē, ē, dē, nē (մի գուցէ)։

Հասարակ է 'ի cave, vale, և fere.

Այլուր է սուղ․ ևս և 'ի մակբայքս benĕ, malĕ, supernĕ, infernĕ.

E աւելի վանկ երկար է յանուանս որ յանգին en-ēnis, el-ēlis, es-ētis, որպէս ren, rēnis, ; Daniel, Daniēlis ; tapes, tapētis. Յաւել և զսոսա․ Iber, Ibēri կամ Ibēris ; crater, cratēris ; ser, sēris ; ver, vēris և զայնպիսի յունականս, ևս և զատանեսին լատինականքս․ fex, fēcis; haeres, haerēdis ; halex, halēcis ; lex, lēgis ; locuples, locluplētis ; merces, mercēdis; plebs, plēbis; quies quiētis; rex, rēgis ; vervex, vervēcis.

Սուղ է այլ անուանս և ածականս․ puer, puĕri ; aër, aĕris.

Զարփ․ ա̄․ E աւելի վանկ 'ի բայս՝ որ յառաջ քան զ r ներկայ և անկատար ժամանակաց երրորդի լծորդութեան․ legĕre, legĕrem, legĕrer, legĕris կամ legĕre.

Բ․ Սղի և 'ի vĕlim, fiĕri, և 'ի յանգս ĕram, ĕrim, ĕro, ևս և 'ի յանգս bĕris, bĕre յապառնիս ։

I յանգ սուղ է միայն 'ի տրական և

'ի կոչական հոլովս յունական անուանց Daphnĭ, Daphnidĭ, և 'ի բառս nisĭ.

Հասարակ է 'ի mihi, tibi, sibi, quasi, ubi, uti.

Եւ երկար յայսլ բառս. patrī, quī, amarī, sī.

I երկար է յառաջին աւելի վանկս չորրորդ լծորդութեան, և յանցեալն որ յանգի īvi, īmus: audīmus, audīvimus.[1] և 'ի sīmus, sītis, velīmus velītis, և 'ի բաղադրեալս նոցին, adsīmus, nolīmus ևն:

Ի բառս, dis, dītis; glis, glīris; lis, lītis; Quiris, Quirītis; Samnis, Samnītis; և 'ի յանգեալն in-īnis, ix-īcis, զր Delphin, Delphīnis; radix, radīcis.

Բայց ոչ յիննեակ բառքս, calix-ĭcis, filix-ĭcis, fornix-īcis, larix-ĭcis, nix-nĭvis, pix-ĭcis, varix-ĭcis, և vĭcis (որոյ ուղղականն կարծի vix).

O յանգ սովորաբար հասարակ է. homo, ego, amo, amando, և o միջարկութիւն՝ նախընթաց այլոյ ձայնաւորի, և մակբայիս ergo (արդ), sero (անագան):

Սուղ է 'ի cedŏ (տուր), citŏ, illicŏ, imŏ, modŏ և 'ի բարդեալս սորա quomodŏ ևն:

Երկար է, ա. Ի տրական և 'ի բացառական հոլովս, virō, bonō; և 'ի մակբայս ածանցեալս յածականաց երկրորդի հոլովման. զր continuō, և 'ի բառս adeō, eō, ideō, tantō, verō, ergō (սակս):

Բ. Ի միավանկս dō, nō, prō, quō,

[1] Սմին իրի venīmus գամք, ներկայ է. իսկ venĭmus եկաք, անցեալ է: Զնոյն իմա և վասն բայից չորրորդի լծորդութեան, որոց կատարեալն ու յանգի ivi.

slō, և ō միջարկութիւն յառաջ քան զբաղաձայն ։

Գ. Ի յունական անուանս՝ յորս ունիցի զտեղի ω տառի յունաց. զր Cliō, echō.

O աւելի վանկ՝ սովորաբար երկար է. os-ōris, pejor և pejus-ōris, virōrum, estōte.

Սուղ է, ա. Ի չեզոքական յանգեալս or, ur, և us : marmor-ŏris, ebur-ŏris, nemus-ŏris.

բ. Ի յատուկ անուանս յունականս, որպէս Hector-ŏris, և յանուանս ազգաց, գետոց, կամ գաւառաց յանգելոց ՚ի o կամ on, զր Macedo-ŏnis (երկարի Helicōnis).

գ. Ի մետասան անուանս. arbor-ŏris, bos-ŏvis, Cappadox-ŏcis, compos և impos-ŏtis, lepus-ŏris, memor-ŏris, ops և inops-ŏpis, praecox-ŏcis, tripus-ŏdis.

դ. Ի բառս vŏlo, fŏre, fŏrem.

U յանգ միշտ երկար է. manū, diū, tū,

Բայց U աւելի վանկ յայն բառս ևեթ երկար է, որ յուղղականն յանգին us, և ՚ի սեռականն լինին ūdis, ūris, ūtis; զր palus-ūdis, jus-jūris, virtus-ūtis. Յաւել և զսոսա, fur-fūris, lux-lūcis, Pollux-ūcis, frūgis (որոյ ուղղականն frux ոչ վարի), և զվերջընթեր վանկս ապառնեայն յանգելոց ūrus; amatūrus.

Յայլս U է սուղ. murmur-ŭris, artus-tŭbus, ևս և ՚ի Ligur-ŭris, intercus-ŭtis, pecus-ŭdis, թէպէտ և ՚ի սեռականն անկորուստ պահէն զU.

Առ հասարակ հոլովք ածանցեալք ՚ի սեռականէ՝ զնոյն պահեն քանակ. զր sŏrōris, sŏrōri, sŏrōrem. Զսոյն խմա և զբայից ածանցելոց ՚ի նախնական ժա-

մանակաց. ămāmus, ămābāmus, ămāvi, ămātum, ămāre.

Y միշտ է սուղ. moly̆, Tiphy̆, marty̆ris. 'ի բացառեալ grȳps-ȳphis, Erȳx-ȳcis.

ՎԵՐՋԻՆ ՎԱՆԿՔ ՅԱՆԳԵԱԼՔ Ի ԲԱՂԱՁԱՅՆ

B, d, t, l, 'ի յանգս բառից սղել տան զվանկն. զր ăb, sĕd, ĭd, ŏb, ŭt, ĕt, amăt, erĭt, nihĭl, procŭl. Բայց l երկար է 'ի բառս nīl, sāl, sōl, և յեբրայականս Daniēl ևն:

C սուղ 'ի nĕc և donĕc ; հասարակ 'ի fac և hic (դերանուն), և երկար յայլ բառս. dūc, hīc (մակբայ):

M միշտ երկար. rosām, amēm, dūm.

N սղէ միայն յանունս որ յանգին ĕn-ĭnis, lumĕn-inis ; և 'ի յունական հայցականս անուանց յանգելոց 'ի as, is և ys սուղ, և 'ի on որոյ յունարէնն գրեցի o օմիկրօն տառիւ. զր Maiăn, Peliŏn. Եւս և 'ի ăn, ĭn, tamĕn և 'ի բաղադրեալս նոցին forsităn, ևն. և 'ի բառս vidĕn', և 'ի egŏn', և 'ի նմանիս :

Յայլս միշտ է երկար. nōn, quīn.

R երկարէ 'ի բառս Ibēr, cūr, fār, fūr, lār, nār, pār և 'ի բաղադրեալս նորա. 'ի vēr, և 'ի յունականն յանգեալս er, որպէս aēr, aethēr, cratēr.

Այլ ամենայն ուրեք սղէ. vĭr, labŏr, datŭr.

As յանգ սուղ է 'ի յունականս ևեթ՝ որոց սեռականն լինի adis, որպէս lampăs-adis, և 'ի յոգնակի հայցականս լատին բառից երրորդ հոլովման. որպէս

heroăs, Troăs. Այլուր երկար է. rosās, amās, erās.

Es յանգ սուղ է 'ի penĕs (հուպ), ĕs (ես) և 'ի բաղադրեալս սորա. յեզակի ուղղականն անուանց՝ որոց աւելի վանկն սղի, որպէս segĕs-ĕtis, milĕs-ĭtis, և 'ի յոգնակի ուղղականս յունական անուանց, որպէս Arcadĕs. Յայլս երկար է. ես և 'ի սոսա, abiēs, ariēs, cerēs, pariēs, pēs, Թէպէտ և աւելի վանկ սեռականաց սոցա սուղ իցէ:

Is յանգ երկար է ա̄, Ի յոգնական հոլովս. rosīs, pulchrīs, gratīs, forīs. Բ̄. Յուղղականս անուանց՝ որոց երկար է աւելի վանկն. dīs, glīs, līs, vīs. Գ̄. Ի չորրորդ լծորդութեան յերկրորդ դէմս եզակի ներկայի սահմանականին, զր audīs, venīs, īs, vīs, և 'ի բաղադրեալսն abīs, mavīs, quamvīs, quivīs, և 'ի fīs (եղանիս), և 'ի ստորադասականսն ausīs, faxīs, velīs, sīs հանդերձ բաղադրելովք սոցին:

Այլ ամենայն ուրեք սուղ է. patrĭs, omnĭs, quĭs, amatĭs, vultĭs, cĭs.

Os յանգ երկար է. honōs, illōs; ōs-oris; սուղ է միայն 'ի ŏs-ossis, exŏs, compŏs, impŏs, և 'ի յունականս ինչ. զր Arcadŏs.

Us յանգ երկար է ա̄. Յուղղականս անուանց՝ որ պահեն զտառս U 'ի սեռականն, զր virtūs-ūtis.

Բ̄. Յեզակի սեռականն, և 'ի յոգնակի ուղղական, կոչական և հայցական հոլովս չորրորդի լծորդութեան. զր manūs.

Գ̄. Յանուանս՝ որ յունարէն յանգին 'ի ους որպէս. Jesūs և յերկուսին 'ի սոսա, tripūs, Melampūs.

Այլ սուղ է յայլ տեղիս. որպէս OEdipŭs, fructŭs, sororibŭs, amamŭs.

Ys յանգ սուղ է. զր Capўs.

ՎԵՐՋԸՆԹԵՐ ՎԱՆԿ ԱՆՑԵԼՈՑ ԵՒ ԴԵՐԲԱՅԻՑ

Յերկավանկ անցեալ ժամանակս բայից՝ առաջին վանկն երկար է. vēni, vīdi, vīci; և յանցեալսն որ կրկնութեամբ առաջնոյ վանկին կազմին՝ երկու առաջին վանկք սուղ են. cĕcĭdi (cado), pĕpĭgi. Բայց ՚ի վեցեսին բայքս առաջին վանկն սղի. bĭbĭ, dĕdi, fĭdi, scĭdi, stĕti, tŭli. Վերջընթերն երկար է ՚ի cecīdi, (coēdo), pepēdi (pēdo), pepēndi (pendo).

Յայլ անցեալս, վանկք որ ածանցին ՚ի ներկայէն՝ պահեն զքանակ իւրեանց, cŏlo, cŏlui; բայց divĭdo լինի divīsi; և pōno, pŏsui.

Անցելոցն որ յանգին avi, evi, ivi, վերջընթերն միշտ երկար է. amāvi, flēvi, quīvi.

Երկավանկ դերբայից առաջին վանկն երկար է. nōtum, vīsum, cītum (cio). Սուղ է յիններսին յայսոսիկ. cĭtum (cieo), dătum, ĭtum, lĭtum, quĭtum, rătum, sătum, sĭtum.

Բազմավանկ դերբայից վերջընթերն երկարի. delētum, audītum, indūtum Սակայն սուղ է ՚ի յանգեալսն itum յորժամ անցեալք նոցին ոչ յանգիցին ivi, զ̃ր agnĭtum, monĭtum; և ՚ի բաղադրեալսն ՚ի բայիցս eo և ruo, adĭtum, abrŭtum.

ԱԾԱՆՑԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼՔ

Ածանցականք պահեն զքանակ նախադասացն իւրեանց ․ զ՛ր ănĭmal, ănĭmosus, ănĭmare, որոց նախադասն է ănĭmus.

Զբաղմաթիւ զարտուղութիւնս կանոնիս սովորութիւնն ուսուսցէ ։

Ածանցականք յորս յաւելու կամ նուազէ բաղաձայն ինչ, ոչ պահեն զքանակ նախադասին իւրեանց ․ զ՛ր fărina (fārris).

Ա․ Քանակ բաղադրեալ բառից սովորաբար նոյն է ընդ քանակի պարզից նոցին ․ որպէս elĭgo ՚ի բառէս lĕgo, occĭdo ՚ի cădo, occĭdo ՚ի coēdo, obēdio ՚ի aūdio.

Զարտ․ ա․ Dejĕro և pejĕro ՚ի jūro ; innŭba, pronŭba և connŭbium ՚ի nūbo ; imbēcillis ՚ի băculus ; semisŏpitus ՚ի sōpio.

բ․ Ածականք յանգեալք dĭcus ՚ի dīco ; nĭhĭlum ՚ի nē և hīlum.

Բ․ Ի բաղադրեալս՝ որոց առաջին մասն ոչ նախադրութիւն իցէ, a և o երկարք են․ խոտորին hŏdie, quandŏquidem, quŏque, intrŏeo ևն․

E սուղ է․ բայց խոտորին mēcum, tēcum, sēcum, sēdecim, nēquam, venēficus, vidēlicet, vēsanus և այլք սակաւք ։

I սուղ է ․ բայց երկարին՝

ա․ Յորժամ փոփոխի բառ հոլովոց․ զ՛ր quīdam, unīcuīque ևն, reīpublicae ևն ։

բ․ Յորժամ կրճատեալ իցէ ․ որպէս īlicet փոխանակ ire, licet ,

scīlicet փոխանակ scire licet, bīgae փոխանակ bijugi են :

Ա̄ . Ի բաղադրեալսն 'ի dies բառէ, prīdie, bīduum են :

Բ̄ . Ի բառս tibīcen, ibīdem, nīmirum, trīceni, sīcubi, ubīque, ubīvis և 'ի նմանիս սոցին :

Գ . Ի բաղադրեալս՝ որոց առաջին մասն նախադրութիւն իցէ, քանակ նոցին նոյն է՝ որ էր 'ի պարզս նոցա . āmitto, dēduco, ēbibo, ăbeo, supĕraddo.

Բայց prae և de սղին յառաջ քան զայլ ձայնաւոր . praĕest, dĕest ; սղի և վերջին վանկ circum բառխս յա̃մժամանակս բայից circŭmago և circŭmeo. Pro թէպէտ և երկար է 'ի բնէ, յոլով ուրեք սղի :

Դ . Մասնիկքս di, se, tra երկարին . dīmitto, sēduco, trāduco. Di սուղ է 'ի dĭrimo և dĭsertus. Re յոլով ուրեք սղի . երկար է միայն 'ի rēfert և 'ի rējicio.

ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆ

Ի վերծանութեան արձակ բանից երրեակ հնչմամբ վարին և լատինացիք, որ են շեշտ կմ̃ վերասասութիւն ('), բութ (ʹ), և ոլորակ (ˆ–) :

Առքս ոչ զերկարութիւն կմ̃ զսղութիւն նշանակեն զվանկիցն՝ յորոց վերայ դնին, այլ ցուցանեն ևեթ զվանկն՝ յորում օրէն իցէ բարձրացուցանել զհընչումն ձայնին, կմ̃ բթել, և կամ զոյգն ինչ ոլորակելով յերկարել : Սմին իրի և այնք 'ի բառից որ յամենայն 'ի վանկս իւրեանց սղիցին, ունին զառանձին

շեշտ. գր Dŏmĭnŭs, որ հնչէ Dómi-nus ; և որք 'ի բաղում երկար վանկից կազմեալ իցեն, սակայն չունին աւելի քան զմի միայն շեշտ. գր īncrēmēntūm հնչէ increméntum.

Արդ բառք լատինացւոց միավանկք են, կամ երկավանկք, կմ՛ եռավանկք և բազմավանկք. և հանրական կանոնք հնչմանն նոցին այսոքիկ են .

Ա. Միավանկ բառք եթէ երկարք իցեն 'ի բնէ՝ առնուն զոլորակ. որպէս flōs, ōs (oris) են. և եթէ սուղք, առնուն զշեշտ. գր spés, ós (ossis) են.

Բ. Երկավանկ բառք եթէ զվերջին վանկն 'ի բնէ սուղ ունիցին, և զվերջընթերն երկար, առնուն զոլորակ 'ի վերջընթերն. որպէս Rōma, flōris. Յայլս առնուն 'ի վերջընթերն զշեշտ. գր hómo, péjus, párens են :

Գ. Եռավանկ և բազմավանկ բառք՝ որոց վերջընթերն երկար իցէ և վերջինն սուղ, առնուն զոլորակ 'ի վերջընթերն, գր Romānus. Եթէ վերջինն երկար իցէ, և վերջընթերն ևս, շեշտեն 'ի վերջընթերն, գր paréntes, Romános.

Իսկ եթէ վերջընթերն սուղ իցէ, շեշտն փոխադրի 'ի նախընթաց վանկն. գր máximus, últimus, dóminus.

ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

Տաղաչափեալ բանն կամ ոտանաւորն է կանոնաւոր հաւաքումն ոտից. և ոտք՝ հաւաքումն վանկից :

Բազմապատիկ են ոտք և ոտանաւորք:

Գլխաւորք յոտս են Երկավանկքն և Եռավանկք :

Երրեակ ազգք են երկավանկ ոտից.

ա. Համբոյր, յերկուց երկարաց, որ ūrbēs.

բ. Մեծասար, յերկարէ և ՚ի սղէ, որ ārmă.

գ. Մեծավերջ, ՚ի սղէ և յերկարէ, որ dĭēs.

Իսկ եռավանկիցն կրկին են այգք.

ա. Սաեղն, ՚ի միոյ երկարէ և յերկուց սղից, որ cārmĭnă.

բ. Վերջատանջ, յերկուց սղից և ՚ի միոյ երկարէ, որ pĭĕtās.

Գլխաւորք յոտանաւորս են վեցոտնեանն և հնգոտնեան:

Ի վեցոտնեան ոտանաւորս հինգերորդ ոտն է միշտ սաեղն, վեցերորդն համբոյր կամ մեծասար, և չորք առաջինքն սաեղն կամ համբոյր:

Զկնի միոյ միոյ յերից առաջնոց ոտից մարթ է դնել զհատածն ¹ :

Լաւ է և մի միայն հատած՝ եթէ կայցէ զկնի երկրորդի ոտին. իսկ զկնի չորրորդին չդնի երբէք:

Ի հնգոտնեան ոտանաւորս հինգ են ոտք. որոց առաջինն երկուքն են սաեղն կամ համբոյր, երրորդն համբոյր, չորրորդն և հինգերորդն վերջատանջք:

Հնգոտնեան ոտանաւորին նախընթաց դասնի միշտ վեցոտնեանն. որ

Dōnĕc ĕ | rīs fē | līx, mūl | tōs nŭmĕ | rābĭs ă | mīcōs;

Tēmpŏră | sī fŭĕ | rīnt | nūbĭlă, | sōlŭs ĕ | rĭs.

1 Հատած է հատուածումն վերջին վանկի բառից, որ ընդ առաջնոյ վանկի յաջորդ բառին կապէ զոտն:

ՑՈՒՑԱԿ

ՀԱՇՈՒԻ ԱՒՈՒՐՑ ԱՄՍՈՑ

Ըստ Նախնի Հռովմայեցւոց աւուրք իւրաքանչիւր ամսոյ երրեակ կոչմամբ հաշուէին: Առաջին օր ամսոյն Caléndae կաղանդք անուանի. հինգերորդն Nonae Նոնայք. երեքտասաներորդն Idus Իդոսք: Բայց յաւուրս չորեցուն ամսոցս, Մարտի, Մայիսի, Յուլիսի և Հոկտեմբերի, Նոնայք կոչին եօթներորդ օր, և Իդոսք հնգետասաներորդն:

Իսկ յեղանակ հաշուելոյն է այս.

Առաջին օր ամսոյն կոչի Caléndis, զի Caléndis *Januárii*.

Երկրորդն Postrídie Caléndas.

Երրորդն Tértio Nonas, *Januárii*.

Չորրորդն Prídie Nonas.

Հինգերորդն Nonis.

Վեցերորդն Postrídie Nonas.

Եօթներորդն Séptimo Idus.

Ութերորդն Sexto Idus, ևն:

Երկոտասաներորդն Prídie Idus.

Երեքտասաներորդն I'dibus.

Չորեքտասաներորդն Décimo nono Caléndas *Februárii* ևն.

Երեսներորդ առաջներորդն Prídie Caléndas.

Այսօրինակ հաշուին աւուրք Յունվարի, Օգոստոսի և Դեկտեմբերի, որոց 31 աւուրք են: Իսկ այլոց ամսոց փոքր ինչ այլայլի հաշիւ, որպէս տեսցի յառաջիկայ աղիւսակին. յորում դիպելարժան է զաւուրց Փետրվարի, զի'ի նահանջ ամս և 24 և 25 օր ամսոյն առին Sexto Caléndas Mártias.

Օր	Յուն. Օգ. Դեկտ. աւուրք 31	Մարտ. Մայ. Յուլ. Հոկ. աւուրք 31	Ապր. Յուն. Սեպտ. Նոյ. աւուրք 30	Փետր. 28
1	Calendis	Calendis	Calendis	Calendis
2	IV Nonas	VI Nonas	IV Nonas	IV Nonas
3	III Nonas	V Nonas	III Nonas	III Nonas
4	Pridie Nonas	IV Nonas	Pridie Nonas	Pridie Nonas
5	Nonis	III Nonas	Nonis	Nonis
6	VIII Idus	Pridie Nonas	VIII Idus	VIII Idus
7	VII Idus	Nonis	VII Idus	VII Idus
8	VI Idus	VIII Idus	VI Idus	VI Idus
9	V Idus	VII Idus	V Idus	V Idus
10	IV Idus	VI Idus	IV Idus	IV Idus
11	III Idus	V Idus	III Idus	III Idus
12	Pridic Idus	IV Idus	Pridie Idus	Pridie Idus
13	Idibus	III Idus	Idibus	Idibus
14	XIX Calendas	Pridie Idus	XVIII Calendas	XVI Calendas
15	XVIII Calendas	Idibus	XVII Calendas	XV Calendas
16	XVII Calendas	XVII Calendas	XVI Calendas	XIV Calendas
17	XVI Calendas	XVI Calendas	XV Calendas	XIII Calendas
18	XV Calendas	XV Calendas	XIV Calendas	XII Calendas
19	XIV Calendas	XIV Calendas	XIII Calendas	XI Calendas
20	XIII Calendas	XIII Calendas	XII Calendas	X Calendas
21	XII Calendas	XII Calendas	XI Calendas	IX Calendas
22	XI Calendas	XI Calendas	X Calendas	VIII Calendas
23	X Calendas	X Calendas	IX Calendas	VII Calendas
24	IX Calendas	IX Calendas	VIII Calendas	VI Calendas
25	VIII Calendas	VIII Calendas	VII Calendas	V Calendas
26	VII Calendas	VII Calendas	VI Calendas	IV Calendas
27	VI Calendas	VI Calendas	V Calendas	III Calendas
28	V Calendas	V Calendas	IV Calendas	Pridie Calendas
29	IV Calendas	IV Calendas	III Calendas	
30	III Calendas	III Calendas	Pridie Calendas	
31	Pridie Calendas	Pridie Calendas		

ՑԱՆԿ

ՅԱՌԱՋԱԲԱՆ 3

ԱՅԲՈՒԲԵՆՔ 5

Տառադարձութիւն 7

ՄԱՍՆ Ա. ՅԱՂԱԳՍ ԲԱՌԻՑ 9

ԱՆՈՒՆ . . . . —

Սեռք անուանց 22

ԱԾԱԿԱՆ 25

Աստիճանք ածականաց 29

Թուական ածականք 31

ԴԵՐԱՆՈՒՆ 36

ԲԱՅ 44

Էական բայ . . . . —

Ներգործական բայք 48

Կրաւորական բայք 67

Կազմութեան ժամանակաց բայից . 77

Համեմատութեան ժամանակաց բայից. 78

Կրաւորակերպ ներգործական և չէզոք բայք 80

Կրաւորակերպ բայք 82

Զարտուղի բայք 84

Պակասաւոր բայք 93

Դիմազուրկ բայք 96

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ 98

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ 100

ՄԱԿԲԱՅ 103

ՇԱՂԿԱՊ 108

ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ 110

ՄԱՍՆ Բ. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ . 111

Համաձայնութեան անուանց . . . —

Համաձայնութեան յարաբերական դեր-անուան 112

Համաձայնութիւն բայից . . . 113
Խնդրառութիւն մասանց բանի . . 114
Խնդիր անուանց . . . . . —
Խնդիր բայից 117
Խնդիր ընդունելութեանց . . . 125
Խնդիր նախադրութեանց . . . —
Խնդիր մակբայից 127
Խնդիր շաղկապից 128
ԿԱՆՈՆՔ ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ . 132
ԿԱՆՈՆՔ ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ . 142
ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ 143
ՑՈՒՑԱԿ ՀԱՇՈՒԻ ԱՒՈՒՐՑ ԱՄՍՈՑ 146